



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

2298

Վ. ԱՐԱՐԱՏՍԿԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

1009

I

Հրատ.

1906

պատկ

Ժ Ը Ն Ե Վ.

9(47)  
Ա-84

9(47)  
Ա-84

15 APR 2008

30 MAY 2011

Վ. ԱՐԱՐԱՏՍԿԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

ՄԱՇՏՈՑԻ  
ԱՆՎԱՆ  
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ  
(„Գրոշակից“ արտատպած)

1008

1009

Հրատ.

Հ. Յ. Դաւենակցաբեան

1906

Ժ Ը Ն Ե Վ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

I

Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Ի Ր Ն

Վերջապէս քաղաքական կեանքը բորբոքեց Ռուսաստանում ևս: Ճորտական և բռնաւոր Ռուսաստանը պատմութեան գիրկն է անցնում... Մեր աչքերի առջև կատարուում է բազմաաանջ, բայց մեծ երկրի վերածնութիւնը ղէպի նոր, ազատ կեանք: Թանկ գնով է գնւած քաղաքական ինքնորոշման այդ իրաւունքը, համապատասխան պատմականօրէն կազմակերպւած իդէալների ոգուն, ծանր փորձանքների, բազմաթիւ զոհերի, արիւն-արցունքների և հերոսական ջանքերի գնով:

Անցեալ 1905 տարին մի ամբողջական ողբերգութիւն է տարիների ամբողջ շրջանում, գրոշմւած վեհ ձգտումների կնիքով, ազատելու դարաւոր ստրկութեան շղթաներից ու կապանքներից, ստրկութիւն տնտեսական, քաղաքական մտաւոր, բարոյական: Եւ ո՞վ գիտէ, թերեւս սա դեռ սկիզբն է աւելի վեհասրանչ և անխուսափելի մի ողբերգութեան, որի վերջին, վախճանական գործողութիւնը կուլւած պիտի լինի հանրամարդկային բարձր կուլտուրայի լայն ճանապարհի վրայ գնելու Ռուսաստանը: Ո՞վ գիտէ, ինչ բարդութիւնների և անակնկալների կը հասցնի մեզ վաղւան օրը, որը պիտի լինի պայքարի օր, լոյսի և խաւարի, ազատութեան ու բռնութեան, շարժկայնութեան և բարբարոսութեան, անձնելիրութեան ու էգոիզմի...



1131-1009

Հասարակական միջնորդարը ելընտրականացել է: Բողոքի և քինական դրուժեան զգացումը դէպի թագաւորոզ վայրենի կամայականութիւնները, ինչպէս և յեղափոխական էներգիաները աճում են հսկայական շարժումով ոչ միայն հասարակութեան գիտակից տարրերի, այլ և մասսաների մէջ, և այն ոչ թէ օրէցօր, այլ՝ ժամ առ ժամ: Մարդիկ կարողանում են մի ամենայ ընթացքում մտածել և զգալ այնքան, որքան մի այլ նօրմալ—սովորական պայմաններում՝ ամբողջ տարիներ կը պահանջէին: Բայց չէ նիրհում և թշնամին: Նա կրծել սկսեց իր սանձը. նա գոռում, մոնչում է: Նա անդօր է՝ իր անմիա փորձերի մէջ՝ պահպանելու, ինչ գնով էլ լինի, իր յսկթահարած զիրքերը, և մոլեգնութեան է հասնում իր սարսափների, ցինիզմի և լպիրշութեան մէջ: Անգործ չէ և այսպէս կուտած «խաղաղ բնակիչը», այդ մէջջանը՝ հոգով ստրուկն ու սպասաւորը՝ կոչումով, այդ բնածին երկրպագուն «կարգապահութեան» և «խաղաղութեան», իգէօլօգը անդօրը, որոճող էակի, ոչ-խելօք և ոչ-յիմար, անհամարձակ և երկչոտ ներկայացուցիչը «միջին դրութեան»: Ամեն ինչ ալեկոծւած է: Ամեն ինչ ձգտում է դէպի միութիւն—որովհետև միութիւնը ոյժ է—ամեն ինչ ձգտում է ձուլել համանմանների հետ, ամեն ինչ ջանք է գործ գնում կազմակերպելու, պահպանելու իր դասակարգային, կաստայական, համբարային և խմբական շահերը:

Սկզբում Առուսաստանում գոյութիւն ունէին միմիայն ու զղու թիւններ. այժմ սկսեցին ծնել աճել և ամրանալ կուսակցութիւններ: Հասարակութիւնը բազմազանւում է (զիֆերենտիստիօն): Մասնաւոր շահերը գումարւում են դանազան քաղաքական և սօցիալական նշանարանների տակ. իւրաքանչիւր մարդ, որ

կատարելապէս անհոգ չէ դէպի իր շուրջը կատարող դէպքերը, իր պարտքն է համարում պարզել, թէ ի՞նչ է ինքը և ինչի՞ կողմնակից: Այսպիսի պայմանների մէջ բնական ջանկութիւն է խելամուտ լինել և ծանօթանալ այն կուսակցութիւնների հասարակական նշանարաններին և քաղաքական ծրագիրներին, որոնք ներկայումս ահա ի վ դեր են կատարում ուսուսական կեանքի մէջ: Իսկ այնպիսի մի յեղափոխական կազմակերպութեան համար, որպիսին է. Յ. Գաշնակցութիւնն է, այդ աւելի քան բնական է, այդ նոյնիսկ անհրաժեշտ է: Հարկաւոր է իմանալ, — ո՞վ է բարեկամ և ով թշնամի, ո՞վ է մեզ մօտիկ հոգով, ձգտումներով, ո՞ւմ հետ առաջ ընթանանք ձեռք ձեռքի տւած և կամ որո՞նց «ծառայութիւններից, երկգիմի հաճոյակատարութիւններից ու պընդերես ձանձրացումից թափ տանք մեր օձիքն, առանց երկար տատանելու...

Այդ կարելի է իրագործել հէնց այժմ, քանի որ ուսուսական գլխաւոր կուսակցութիւնները որոշ չափով գտել են և նրանց ծրագրի ու տարբերակայի հիմնական կէտերը պարզել: Հասկանալի է, որ այնպիսի մի անցողական մօմենտում, որպիսին այժմ է, երբ քաղաքական և հասարակական *credo*-ների բիւրեղացման պրօցեսը գեռ հեռու է վերջացած լինելուց—և չէ էլ կարող վերջացած լինել—պէտք է գոյութիւն ունենայ մանր համախմբումների մի ամբողջ շարան, «կուսակցութիւններ» անունով: Բայց ո՞չ նազ հասկանալի է և այն, որ այս տեսակ «կուսակցութիւնները» ժամանակով կամ պէտք է անհետանան քաղաքական գործունէութեան ասպարէզից և կամ պէտք է լուծւեն ուրիշ, աւելի կենսունակ կուսակցութիւնների մէջ: Ահա թէ ինչու մենք բոլորովին աւելորդ ենք համարում կանգ առնել այդ օրինակ մեռելածին քաղաքական խմբերի ընդհանուր ֆիզիօ-

նովիայի պարզաբանութեան վրայ,—նրանք ոչ այլ ինչ են, եթէ ոչ անկայուն փրփուր՝ ալեկոծւած ծովի մակերևոյթի վրայ...

Արդ, ո՞ր կ ու ս ա կ ց ու թ ի է ն ն ե ը ն են արժանի այդ անւան, և կամ որոնք են, որ իրաւունք ունեն պահանջու առջնորդի դեր՝ ուսուց կեանքի մտակայ դէպքերում: Ճիշտն ասած՝ դրանք ընդամենը երեք են.— 1. Յ ե ղ ա փ ո խ ա կ ա ն - Ս օ ց ի ա լ ի ս տ ա կ ա ն , 2. Ս ա Տ մ ա ն ա գ ի ը - ո ա մ կ ա վ ա ը ն ե ը կ ա մ ժ ո ղ ո վ ը դ ա կ ա ն ա գ ա տ ու թ ե ա ն կ ու ս ա կ ց ու թ ի է ն և 3. Ս ա Տ մ ա ն ա գ ը ա կ ա ն - մ ի ա ս Ե տ ա կ ա ն, որի կազմի մէջ մտնում են՝ «Հոկտեմբեր 17-ի միութիւնը» և «Արգիւնա-առևտրական կուսակցութիւնը»...

Pur sang միապետականների մասին, կամ ինչպէս իրենք են յարջորջում, «ինքնակալ միապետականների» մասին, առ այժմ, չբարձր են խօսելու տեղիք չը կայ: Անանքը հարւածում է նրանց անողորմ կերպով—և իբրև ապացոյց դրան՝ այն պարտութիւնը, որին ենթարկեցին նրանք «գումայի» ընտրութիւններին: Թերևս ժամանակով կեանքի աւելի հաստարկչիւ մտննտում՝ նրանք ոգի կ'առնեն, բայց առայժմ, կրկնում ենք, նրանք ստիպւած են ը լ օ կ կազմել «արգիւնա-առևտրականների» և «հոկտեմբերականների» հետ, որոնց մի մասը թերևս մտապագայում իրենց կողմը քաշեն:

«Սահմանադիր-առակափարները» կամ ինչպէս ընդունւած է ասել, «կազմաները» բաժանուում են աջակողմեանների և ձախակողմեանների: Աերջիններս իրենց մի քանի հայեցակէտերով յարում են սօցիալիստներին, որոնք, ինչպէս յայտնի է, կազմում են երկու կուսակցութիւն՝ — «սօցիալ-դէմոկրատների» և «սօցիալիստ-յեղափոխականների» կուսակցութիւն: Մենք կը սկսենք վերջինից, նախ այն պատճառով, որ Գաշնակցականները իրենց ծրագրով

և տակտիկայով աւելի մօտ են կանգնած «սօցիալիստ-յեղափոխականներին», և երկրորդ, որովհետև կան և ուրիշ յատուկ պատճառներ: Հէնց այս բոլորէս մեր առջև դրւած է «սօցիալիստ-յեղափոխականների» հրատարակած «Ծանուցումն կուսակցական համաժողովի», որը կայացաւ Մօսկւայի պատմական օրերից անմիջապէս յետոյ և որի ընթացքում կուսակցութիւնը մշակեց իր վերջնական ծրագրերը—մի բոլորովին բարեպատեհ հանգամանք, որ միջոց է տալիս ճշաիւ ծանօթանալու այդ կուսակցութեան կուրի եղանակների, մերձաւոր խնդիրների և վերջնական նպատակի հետ:

## II

### ՍՕՑԻԱԼԻՍՏ-ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆՆԵՐ

Իւրաքանչիւր զիտակից քաղաքական կուսակցութիւն իր ծրագրի և տարտիկայի մէջ՝ իբրև հիմք ընդունում է հ ա ս ա ը ա կ ա կ ա ն - փ ի լ ի ս ո փ ա յ ա կ ա ն որոշ աշխարհայեացք, ուր արտայայտում են նրա տեսակէտները պատմական պրօցեսի էութեան և ֆակտօրների վերաբերմամբ, նրա հասարակական իդէալները, նրա վերաբերմունքը դէպի ընթացիկ մօմենտը և դէպի այն հասարակական ը է է լ ոյժերը, որոնց ներկայութեամբ և աջակցութեամբ կուսակցութիւնը ձգտում է զարգացնել և լայնացնել իր գործունէութիւնը և իրագործել իր մտաւոր ծրագրիները: Ինքն ըստ ինքեան պարզ է, որ սօցիալիստ-յեղափոխականները ոչ միայն ունին այդպիսի աշխարհայեացք, այլ և դա կազմում է կուսակցութեան ծրագրի կենդանի շունչն ու ոգին:

Փորձենք համառօտակի ուրւագծել այդ աշխարհայեացքը:

«Մարդկութեան սօցիալական պրօգրեսը, որը արտա-

«յայտուում է հասարակական փոխադարձ համերաշխութեան  
 «և մարդկային անձնաւորութեան բազմակողմանի և ներ-  
 «դաշնակ զարգացման պայքարի մէջ, ենթադրում է ոչ մի-  
 «այն դիմազուրկ դասակարգերի հակամարտման (անտազո-  
 «նիզմի) զարգացումը, այլև գիտակցող մարտիկների միջա-  
 «մտութիւնը՝ յանուն ճշմարտութեան և արդարութեան»:

Այս խօսքերի մէջ որը մենք առաջ ենք բերում սօցիալիստ-յեղափոխականների կուսակցական ծրագրի յառաջարանից, արտայայտած են նրանց, այսինքն՝ սօց-յեղափոխականների հասարակական-փիլիսոփայական *credo*-ի հիմնական գծերը. այստեղ մասնանիշ են արւած թէ՛ այն նպատակները, որոնց համար սօց-յեղափոխականները պարզեցին իրենց ռազմական գրոշակը, և թէ՛ այն իրական՝ պատմութեան կողմից առաջադրած ոյժերը, որոնց օգնութեամբ «ուսուպիան» պիտի դառնայ իրական փաստ:

Գէպի ո՛ւր է տանում, կամ ո՛ւր պիտի տանի հասարակական պրօգրեսը—հարցնում են սօց-յեղափոխականները և առանց մի րոպէ անգամ վարանելու, իրենց ճշտախօսութեան լիակատար գիտակցութեամբ, համաձայն խօսականութեան և խղճի, պատասխանում են՝ «Գէպի հասարակական փոխադարձ համերաշխութեան հաստատումն և գէպի անձնաւորութեան բազմակողմանի և ներդաշնակ զարգացումն»: Նրանք սօցիալիստներ են, բայց անհատականութեան որոշ արտայայտած խտունւածքով:

Տնտեսական և հասարակական կեանքի ապագայ ձեւերը—սօցիալիզմը՝ զբաղեցնում է նրանց միտքը այնքան, որքան նա ընդունակ է ստեղծել՝ ըստ կարելոյն շատ՝ բարեպատեհ պայմաններ անձի ազատ զարգացման համար: Հէնց այդ իսկ պատճառով, «սօցիալական փոխադարձ համերաշխութեան հաստատումը» նրանք համարում են

իրև անհրաժեշտ հիմք՝ անձաւորութեան նիւթական և մտաւոր զարգացման համար: Համաձայն այդ նպատակների, սօց-յեղափոխականների գործունէութիւնը պիտի ընթանայ երկու ուղղութեամբ,—կեանքի հին կարգերի կործանումով և նոր ձեւեր ստեղծելով: Արդիւնաբերական գործիքների մասնաւոր սեփականութեան, դասակարգային կազմակերպութիւնների, քաղաքական և հասարակական հիմնարկութիւնների ստիպողական ընդթի ոչնչացումն,—դա մի կողմն է միայն նրանց երկորակ ծրագրի: Եւսկ արդիւնաբերական միջոցների համայնացումը, ընդհանուր աշխատանքի համաչափ կազմակերպութիւնը յօգուտ ընդհանուրի, և այդ կազմակերպութեանը համապատասխանող քաղաքական ձեւեր—ասիայի ծրագրի միւս կողմը:

«Միմիայն այդ ծրագրի իրականացումը, ասում են նրանք, կը փոխի հասարակաց հարստութեան աճոււմը և բանւոր դասակարգի (այսինքն՝ քաղաքային պրօլետարիատի և աշխատաւոր գիւղացիութեան) ճնշման, ւարկութեան աղբիւրը կը վերածէ բարեկեցութեան և ազատութեան աղբիւրի: միմիայն նա՛ կը տայ կարելիութիւն մարդկութեան նիւթական և մտաւոր ուժերի անընդհատ զարգացման, վերջ տալով նրա մի բանի խաւերի այլասեռման, որ արդիւնք է պարապութեան և կուշտ կեանքի, ազատելով միւսներին Ֆիդիքական անչափ և բիրտ աշխատանքից ու տարրական պիտոյքներին անբաւարարութիւնից: Միմիայն նա կ'ապահովէ, մարդկային անհատականութեան բազմակողմանի և ներդաշնակ զարգացումը՝ սօցիալական փոխադարձ համերաշխութեան հողի վրայ» (*ibid*):

Եւ այսպիսի լայն խնդիրներ գնելով իր առաջ, սօցիալիստ-յեղափոխականների կուսակցութիւնը տէքաթող է անում այն դժւարութիւնները, որոնք կապւած են

նրանց իրականացման հետ. նա երբէք չէ երազում, որ իդէալները անյապազ կը կերպարանափոխուին և կը դառնան կենդանի իրականութիւն. չէ երազում մի երեակայական թուիչք «անհրաժեշտութեան թագաւորութիւնից» դէպի «պատուութեան թագաւորութիւնը». նա գիտէ, որ պատուութեան ճանապարհին գտնուում են մի շարք կայաններ (էտապներ), որոնցից ուստի հասարակութիւնն ու ժողովուրդը խուսափել չէ՝ կարող պատմական անհրաժեշտութիւնից բղխած հանգամանքների շնորհիւ: Նա պնդում է, որ աշխատող մասսաները պէտք է մի շարք թէև խոշոր բայց և այնպէս մասնակի, տիրապետումներ անեն՝ նախ քան նրանց կ'աջողւի իրականացնել իրենց վերջնական նպատակը: Այսպիսով չը հրաժարելով հանդերձ, այսպէս կոչւած՝ իրական քաղաքականութիւնը, չը հրաժարելով աշխատաւոր մասսաների օրւայ շարիքը կազմող այս կամ այն կուռից, սօցիալիստ-յեղափոխականների կուսակցութիւնը իր պարտքն է համարում «ձգտել՝ որպէսզի մասնակի տիրապետումների քաղաքականութիւնը խոչընդոտ չը հանդիսանայ բանւոր պատկարգին՝ հասնելու իր վերջնական-հիմնական նպատակին, որպէսզի իր յեղափոխական կուռի միջոցով նա ձեռք բերէ գեթ այնպիսի փոփոխութիւններ, որոնք կարող կը լինեն զարգացնել նրա խտացումը և ընդունակութիւնը դէպի ազատագրական կուռը, նպաստելով նրա մտաւոր ու կուլտուրական կարիքների մակերևոյթի բարձրացման, ամրացնելով այսպիսով նրա ազգական դիրքերը ու հեռացնելով ա՛յն արգելքները, որոնք կը գտնուին նրա կազմակերպական ճանապարհների վրայ» (ibid): Աւրիշ խօսքով՝ վաղան կամ մերձաւոր ապագայի կուռը պարտաւորական կերպով պէտք է առաջ մղւի այն գաղափարն երի դրօշակի տակ, որոնց լոյսը գալիս է աւելի հեռաւոր ապագայից: Սօցիալիստը

ոչ մի բովէ չը պէտք է մոռանայ, թէ որն է հիմնական խնդիրը՝ իսկ այդ կարելի է միմիայն հասարակական իրական ուժերի և յեղափոխական եռանդի կիրառութեան որոշակի համաձայնութեամբ, և անյողողոյճ ձգտումով՝ նպատակայարմար կերպով օգտուելու ներկայից, յօգուս սօցիալիզմի իրականացման...

Բայց ո՛ւր են այն ուժերը, որոնք ուղղում են դէպքերը դէպի սօցիալիստական իդէալներ, անձնաւորութեան բազմակողմանի, ներդաշնակ դարգացման ճանապարհով, փոխադարձ համերաշխութեան հողի վրայ: Այս կէտում ևս սօցիալիստ-յեղափոխականները տալիս են որոշ պատասխան: Նրանք ի հարկէ, ընդունում են մարքսիստական վարդապետութեան այն մասը, որը խօսում է ժամանակակից հասարակութեան դասակարգային բնաւորութեան, դասակարգային շահերի ներհակութեան ու կոռիւնների, կապիտալիստական անտեսութեանը յատուկ ինքնաժխտման տենդենցիաների մասին, որովհետև—գաղտնական սօցիալիզմի գնահատելի և առողջ միջուկն է: Մական այդ դեռ բոլորը չէ. նրանց կարծիքով մի շարք ֆակտորների մէջ, որոնք պայմանաւորում են պատմական դէպքերի զարգացումը, շատ կարեւոր նշանակութիւն ունին և գաղափար-օր-օր-ժ-երը: Նրանց ստեղծագործիչ, իրական դերը՝ անտեսական, հասարակական և քաղաքական ձևերի կործանման և վերակազմութեան գործում՝ ոչ մի կասկածի ենթարկւել չէ կարող: «Սօցիալական պրոգրեսը, ասում են սօցիալիստ-յեղափոխականները, ենթադրում է ոչ միայն դիմագուրդ դասակարգային անտագոնիզմների զարգացումը, այլ և գիտակից մարտիկն երի միջամտութիւնը՝ յանուն ճշմարտութեան և արդարութեան» (ibid):

Գիտակից «քննադատութիւն մտածող» անձնաւորութիւնը չէ հեռացում այսպիսով հասարակական գործունէու-



Թեան ասարեզլից, նա չէ զոհուում «կազմակերպած մաս-  
աներին», այդ «գիմարուրի գասակարգային անտազո-  
նիզմների արտայայտողներին», այլ կատարելապէս որոշ և  
շատ յարգելի տեղ է բռնում պատմութիւնը կազմող  
ուժերի շարքում: Ուրեմն, թո՛ղ քաղաքային պրո-  
լետարիատը և աշխատաւոր գիւղացի ու-  
թիւնը կազմեն ազատագրական բանա-  
կի գլխաւոր գործարմինը (կորպուս): Բայց  
չէ՞ որ ոյժ է ներկայացնում և ո՛չ գասակարգային, յե-  
ղափոխական ինտելիգենցիան, այն էլ հը-  
զօր, գրգռող, լուսամիտ ոյժ:

Ահա դրանք են այն նախահիմունքները, որոնց վրայ  
յենւած է սօցիալիստ-յեղափոխականների ծրագիրը:

Գառնանք սօցիալիստ-յեղափոխականների ծրագրին,  
տեսնենք դէպի ո՞ւր են ուղղւած նրանց մօտակայ ջան-  
քերը, ի՞նչ են մտադիր նրանք պաշտպանել և խլել կա-  
ռավարութիւնից՝ իրենց կուով, որպի՞տի բարիքներ են  
խոստանում Ռուսաստանի համայն բնակչութեան, վերջ-  
նական նպատակի—սօցիալիզմի իրագործման ճանապարհին:

Ռուսաստանի բնակիչը—ինչ ազգի, գասակարգի և  
անտեսական կացութեան էլ պատկանի նա, զրկւած է առ-  
այժմ քաղաքական և մարդկային ամենատարրական իրա-  
ւունքներից: Նա քաղաքացի չէ և ոչ էլ ազատ անձնաւոր-  
ութիւն, այլ «հլու-հպատակ» և ստրուկ: Այստեղից ան-  
հրաժեշտօրէն հետևում է, որ պէտք է ազատ ու-  
թիւն սալ ուսաստանցուն, պէտք է ազատել նրան  
քաղաքական ճորտութիւնից և ճանաչել նրա մարդ-  
կային ու քաղաքական իրաւունքները:  
Այս տեսակէտից սօցիալիստ-յեղափոխականների պահանջ-  
ները է ապէս ոչնչով չեն տարբերում ուրիշ պրօգրե-  
սիվ կուսակցութիւնների պահանջներից: Առում ենք է ա-

պէս, որովհետև սօցիալիստ-յեղափոխականները *de facto*  
ձեւակերպում և պարզաբանում են մարդու և քաղաքա-  
ցու «անկապտելի իրաւունքների» վեւմ սկզբունքը աւելի  
որոշ, աւելի ճիշտ և, որ գլխաւորն է, աւելի հետևողա-  
կան կերպով, քան թէ օրինակ՝ հէնց «ժողովրդի ազա-  
տութեան» կուսակցութեան կողմնակիցները, այն է՝ սահ-  
մանադիր-նամկաւարները: Եւ այլ կերպ չեն էլ կարող  
վարւել այն մարդիկ, որոնք իրենց նպատակ են դարձրել՝  
ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք անհրաժեշտ են  
«ն ձի բազմակողմանի և ներգաղձնակ  
գարգացման համար»:

Մարդու իրաւունքներ:—Արիւնաթաթախ տառերով  
են գրւած դրանք կուսուբախան ժողովուրդների պատ-  
մութեան էջերում: Եւ ո՞վ չի լսել, թէ ինչու՞մն են կա-  
յանում այդ իրաւունքները: Մարդն ազատ է ամեն բա-  
նի մէջ հետևելու իր խղճի ազդեցութեան և թելադրու-  
թեան. ազատ է արտայայտելու ի լուր բոլորի գրեզի և  
խօսքով իր հայեացքներն ու դաւանանքները, ազատ է  
գաշնակցելու իր համանմանների հետ, այս կամ այն ընդ-  
հանուր նպատակների իրականացման համար. ազատ է  
ընտրելու իր ձաշակին և կոչման համապատասխան պա-  
րսպմունքներ, ազատ է անարգել և առանց հսկողու-  
թեան ապրել այնտեղ, ուր ինքն է ցանկանում—ահա  
այն տարրական իրաւունքները, կամ եթէ ուզում էք,  
ազատութիւնները, առանց որոնց անմիտ և անիմաստ է  
մարդ հասկացողութիւնը: Խլեցէք նրանից ազատ ինք-  
ն որ ոչ ման իրաւունքը և ձեր առաջ կը պատկերա-  
նայ ոչ թէ բանականութեամբ օժտւած, տեսնանքներով  
թեւաւորւած «աստուծային կայծի» կրողը, այլ «վարտի-  
քաւոր երկոտանիների» խղճուկ ներկայացուցիչը, այնքան  
տարածւած աշխարհի երեսին, ընդունակ միմիայն «կեն-  
դանիների ընտանիքում առաջին կենդանին կուշելու»:

Սակայն մ ա ղ ու զ պատկերի հետ անխզելի կերպով շարկապեաձ ազատութիւնների իրականացման համար անհրաժեշտ են քաղաքական և տնտեսական համապատասխան ձևեր: Չը կայ մ ա ղ ու զ իրաւունքը առանց քաղաքացու իրաւունքի: Միմիայն ազատ քաղաքական կազմակերպութեամբ, միմիայն իւրաքանչիւր քաղաքացու իրական և ոչ թէ ֆիկտիվ մասնակցութեամբ քաղաքական և հասարակական կեանքի մէջ, միմիայն ի ն ք ն ա վ ա ղ ու թ ե ա ն սկզբունքի ազատ և բազմակողմանի կիրառութեամբ է հնարաւոր պահպանել մարդու «անկապ ա ե լ ի ի ռ աւ ու ը ն ե ռ ք»: Թողովուրդը ինքը պէտք է որոշի իր քաղաքական կամքը, ազատութիւնը ինքը պէտք է ղեկավարի իր վիճակը—և այն ժամանակ միայն նա կը լինի ոչ թէ պանոլրդեան հօտ, ոչ թէ «հլու հպատակներ» մի ծնկաչօք ամբոխ, այլ ազատ անձնաւորութիւնների մի ամբողջութիւն, միացած ընդհանուր շահերով և ձգտումներով, կապեաձ համերաշխ գործունէութեամբ և փոխադարձ շահերի կապերով:

Սակայն սա դեռ քիչ է: Երկրիս վրայ չը կան, եթէ կարելի է այսպէս ասել, հանրամարդեր, այլ կան մարդիկ զանազան ցեղերի և ազգութիւնների, որոնց ներկայացուցիչները գործաձ են որոշ ցեղական և ազգայնական յատկութիւնների կնիքով:

Այս կամ այն ազգութեան պատկանող մարդը բնականօրէն, ուրեմն և լիովին արդարացիօրէն, ձգտում է արտայայտելու իր ոգին այնպիսի ձևերով, որոնք համապատասխան են նրա ազգային առանձնայատկութիւններին: Այս տեսակէտից նա նոյնպէս ազատ պէտք է լինի: Պատմական ճակատագրի կամքով նա ոչ միայն մարդ է, այլ և ֆրանսիացի, ռուս, լեհ, հայ և վրացի կամ հրէայ և որպէս զրանցից մէկն ու մէկին պատկանող՝ նա պա-

հանջում է ազգային ազատ ինքնորոշումն: Արդ, իրաւունք ունի՞ արդեօք որեւէ մէկը, առանց բնանալու նրա ոգու վրայ, առանց ձեռնամուխ լինելու նրա, որպէս մարդու, անկապակի իրաւունքին, արգելել նրա ազգային ինքնուրոյնութեան ձգտումը, եթէ միայն այս գէպքում չեն վնասում ուրիշ ազգութիւնների նոյնքան օրինական ձգտումները: Այս հարցին երկու պատասխան չը կայ և չի էլ կարող լինել, քանի որ անհատական ինքնորոշման լիակատար իրաւունքը ի նկատի ունի նոյնպէս և ազգային ինքնորոշման անպայման իրաւունքը:

Հէնց այսպիսի ընդհանուր տեսական սկզբունքների վրայ է հիմնեաձ սօցիալիստ-յեղափոխականների ծրագրի այն մասը, որ ռուս բնակչի քաղաքական և իրաւական կեանքին է վերաբերում և որը հակիրճ կերպով կարելի է ձևակերպել հետեւեալ պահանջների մէջ.

- 1) Խղճի, խօսքի, մամուլի, փողովների, մութիւնների, տեղափոխութեան և պարապմունքների բնտրութեան լիակատար ազատութիւն:
- 2) Անձի և բնակարանի անձեռնմխելիութիւն:
- 3) Ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի բնտրողական իրաւունք ամեն մի քաղաքացու համար, առանց խտրութեան սեռի և հասակի՝ ոչ պակաս քան տարեկանից: Այսպիսի սկզբունքների վրայ հիմնեաձ ռաւ կա վ ա ղ ու թ ե ա ն հ մ ա ն ա զ ղ ու թ իւ ն, նահանգական ու համայնական (թէ քաղաքային և թէ գիւղական) լալն ի ն ք ն ա վ ա ղ ու թ ե ա մ բ: Յարաբերական ներկայացուցութիւն, փողովրդական ուղղակի օրէնսդրութիւն, այսինքն քաղաքացիների բեֆերենդում և ուղղակի օրէնսդրական ինիցիատիվ, անկախ, գուշէ և հակառակ պարլամենտի անդամների ցանկութեան:

4) Իրաւունք՝ բնտրելու, փոխելու և դատի ենթարկել-

լու պաշտօնական անձանց, ի բաց չառնելով պատգամաւորներին և դատաւորներին:

5) Ճանաչել առանձին ազգութիւնների ազատ ինքնորոշման անպայման իրաւունքը և որքան հնարաւոր է՝ ֆեդերատիվ հիմունքների վրայ դնել նրանց յարաբերութիւնները: Իրաւունք տալ ամեն մի ազգութեան՝ իր թւին յարաբերական մասն ունենալ բիւդժէի մէջ, նախասահմանած կուլտուրական-կրթական գործի համար: Մայրենի լեզւի ներմուծումն տեղական, հասարակական և պետական բոլոր հիմնարկութիւններում:

6) Ընդհանուր, պարտադիր կրթութիւն պետութեան հաշտով:

7) Եկեղեցու անպայման բաժանումն պետութիւնից և կրօնի յայտարարումն իբրև ամեն մի անհատի մասնաւոր գործ:

8) Վերացնել մշտական զօրքը և նրան փոխարինել ժողովրդական միլիցիայով\*:

Ատարեկապէս կողմնակից ազատ անձի և պաշտպան ժողովրդական կամքի՝ սօցիալիստ-յեղափոխականները միաժամանակ երևան են գալիս և իբրև աշխատանքի կուսակցութիւն, այնքան, որքան վերջինս անհրաժեշտ տարրն է կազմում անհատի նորմալ գոյութեան և ազրիւր՝ ժողովրդական բարեկեցութեան:

Ռուսաստանի ամբողջ անտեսական կեանքը պահպանուած է աշխատանքի շահագործմամբ, հիմնած աշխատող մեծամասնութեան լիակատար հպատակութեան վրայ, հանդէպ արտօնաւորեալ փոքրամասնութեան: Տնտեսական անապահովութիւնը, անտանելի և ուժասպառող աշխատանքի հետ միասին, մարդկային ամենատարրական


\* Այս բոլոր պահանջները մենք վերցրել ենք սօց.-յեղափոխականների համագործակցութեան վաւերացրած ծրագրից:

պահանջներին բաւարարութիւն տալու անկարելիութիւնը, առօրեայ հակառողջապահական կենցաղը, որը յաճախակի հասցնում է հիւանդութեան և վաղաժամ գառամութեան և նոյնիսկ մահուան, մտաւոր ընդունակութիւններ գարգացնելու և հոգեկան պահանջներին բաւարարութիւն տալու համար անհրաժեշտ ազատ ժամանակի բացակայութիւնը — ահա սովորական վիճակը այն մարդկանց, որոնք կարիքից և քաղցից ստիպուած՝ շաղկապուած են աշխատանքին: Արիք չը կայ ասելու, որ միմիայն սօցիալիստական համայնքի մէջ կ'իրագործուի աշխատաւոր մասսաների ազատութիւնը անտեսական ճորտութիւնից:

Բայց, նոյնիսկ այժմ, բուրժուական — կապիտալիստական կազմի սահմաններում էլ կարելի է մտցնել մի շարք օրէնսգրական միջոցներ, որոնց նպատակը կը լինի պաշտպանել քաղաքային պրօլետարիատի և աշխատաւոր դիւզացիութեան հոգեկան և ֆիզիքական ուժերը, և այդպիսով գօրացնել նրանց ընդունակութիւնները՝ կուսելու յօգուտ սօցիալիզմի: Առանց սոյնանման բարեփոխութիւնների, «մարդու և քաղաքացու իրաւունքների յայտարարումը» ինքն ըստ ինքեան շոշափելի կերպով չի թեթեւացնի աշխատող մասսաների դրութիւնը, այլ գուցէ և երևան գայ իբրև դառն հեգնութիւն նրանց հասցէին — իրաւունք «ազատօրէն» հաշմանգամ լինելու թէ ֆիզիքապէս և թէ հոգեպէս, իրաւունք «ազատօրէն» գոհելու կենսական բոլոր ուժերը յօգուտ կապիտալի և իշխանութեան, իրաւունք «ազատօրէն» մեռնելու... և Ասուած գիտէ թէ ուրիշ էլ ինչ բախաւորութիւններ...

Ահա թէ ինչու սօցիալիստ-յեղափոխականների կուսակցութիւնը ոչ մի կերպ չը նսեմացնելով քաղաքական ազատութեան վայելքները, պնդում է սօցիալական բեֆօրմների անհրաժեշտութեան վրայ, որոնց իրականացմամբ բնութեւնը դասակարգը հնարաւորութիւն կ'ունենայ

(1009) 1137-1009



օգտուել ա՛յն բոլոր բարիքներից, որո՞նք կապւած են «մարգու և քաղաքացու իրաւունքների յայտարարման» հետ:

Այս հասարակական բարենորոգումները պէտք է ընդգրկեն Ռուսաստանի հասարակական-անտեսական կեանքի բոլոր խաւերը: Այսօրինակ սօցիալական բարենորոգումների տարրական անհրաժեշտութեան հետ միասին՝ Սօցիալիստ-Յեղափոխականները ունեն մի շարք ծրագրական պահանջներ ևս, որոնք վերաբերում են բանւորական օրէնսդրութեան, ֆինանսական քաղաքականութեան և հողային յարաբերութիւնների կազմափոխութեան: Արդ՝ ի՞նչ բարենորոգումների պէտք է ձեռնամուխ լինել՝ յօգուտ քաղաքային պրօլետարիատի և աշխատւոր գիւղացիութեան: Սօցիալիստ-Յեղափոխականները այս հարցին իբրև պատասխան՝ հետևեալ պահանջներն են դնում.

- 1) Բանւորական օրւայ կրճատումն, համապատասխան բնական և զիտական առողջապահութեան:
- 2) Աշխատանքի վարձատրութեան նւազագոյն չափի որոշումն, ինքնավար սրահների և բանւորական պրօֆեսիօնալ միութիւնների համաձայնութեամբ:
- 3) Ապահովագրութիւն՝ գծբախտութիւններից, ծերութիւնից և հիւանդութիւններից առաջացած անգործութեան դէմ, պետութեան և տէրերի հաշւով, ապահովագրւողների ինքնավար սկզբունքների վրայ:
- 4) Աշխատանքի օրէնսդրական ապահովումն արդիւնաբերութեան և առևտրի բոլոր ճիւղերում, համաձայն զիտական առողջապահական պահանջներին, գործարանական տեսչութեան հսկողութեան ներքոյ, ընտրւած բանւորների կողմից:
- 5) Բանւորների պրօֆեսիօնալ կազմակերպութիւններ և պրօգրեսիվ կերպով զարգացող նրանց մասնակցութիւնը աշխատանքի ներքին կանոնաւորման գործում, արդիւնաբերական հիմնարկութիւնների մէջ:

Աշխատւոր մասսաները կրկնակի ճիրանների սակ են գտնուում—նրանց ճնշում են երկու կողմից, նրանց շահագործում է և՛ կապիտալը և՛ «իշխանութիւնը»: Գրանից բղխում է այն բնական ձգտումը, որ աշխատանքի ներկայացուցին պէտք է պաշտպանել՝ թէ քաղքենու (բուրժուազիայի) ընչաքաղց միտումներից և թէ՛ բիւրօկրատիայի գիշատիչ ասպատակութիւններից: Եւ վերջինս հնարուոր է միմիայն կառավարութեան ֆիլանսական քաղաքականութեան արմատական բարենորոգմամբ:

Հարկերի և դրա հետ կապւած պետական եկամտի ամբողջ լուծը ծանրանում է ազգաբնակչութեան նոյն անապահով դասակարգի—աշխատւորների վերայ: Այդ չք պէտք է տեղի ունենայ, բացահանչում է սօց-յեղափոխականների ծրագիրը և մի շարք միջոցներ է ցոյց տալիս՝ կործանելու այդ լուծը: Ո՞րպիսի միջոցներ են դրանք: Նրանք հանրածանօթ են.— ոչնչացումն անուղղակի հարկերի, բացառութեամբ պճնանքի առարկաների հարկերից: ոչնչացումն առհասարակ ա՛յն բոլոր հարկերի, որոնք աշխատանքի վերայ են ծանրանում. ոչնչացումն հովանւորական մաքսի. ներմուծումն ժառանգային և եկամտային պրօգրեսիվ տուրքերի, ապատելով այն մանր եկամուտները, որոնք օրէնքով որոշւած նօրմայից ցածր են:

Այժմ մենք գալիս ենք սօց-յեղափոխականների պահանջների ամենաբնորոշ կէտին,— ա գ ր ա յ ի ն ծրագրին, որը նրանք պաշտպանում են այնքա՛ն առկուն և խելամիտ կերպով, չնայած այն կատաղի յարձակումներին, որոնք տեղի ունեն երկու գիրքերից—ուղղափառ մարքսիստների և այսպէս կոչւած «րեւել քաղաքականութեան» գիտուն ներկայացուցիչների, այն է սահմանադրութեամբ կառավարների կողմից: Աննգ առնելով իր ազբարային ծրագրի զարգացման ընդհանուր հիմունքների վերայ,

սօցիալիստ-յեղափոխականների կուսակցութիւնը յայտարարում է, որ «Տողային վերակազմութիւններին վերաբերեալ հարցերում ինքը կ' յենել, յանուն սօցիալիզմի և բուրժուա-սեփականատիրական սկզբունքների դէմ մղած կռւել, ուստի գիւղացու համայնական և աշխատաւորական հայեացքների, նրանց մէջ տարածւած այն համոզմունքի վերայ, որ հողը ոչ ոք ինքն չէ, և որ նրանից օգտուելու իրաւունքը աշխատանքն է տալիս միմյայն» (ծրագրից): Այն դարաւոր, աւանդական լոզունգը՝ «հողը Աստուծոնն է, իսկ բարիքներից օգտուելը՝ աշխատաւորին» սօցիալիստ-յեղափոխականները փոխելին հետեւեալ պահանջով՝ «հողերի համայնացումն» — մի տերմին, թէև բազմաթիւ կեղծ բացատրութիւններ յարուցանող բայց իր էութեամբ կատարելապէս որոշ:

Այդ արտայայտութիւնը այսպէս պէտք է հասկանալ: Առանձին անհատների կամ խմբակների մասնաւոր սեփականութեան իրաւունքը ոչնչացւում է. հողը դառնում է համաժողովրդական սեփականութիւն՝ պարտադիր, օրէնսդրական որոշ կարգով սահմանւած եղանակով առանց յետգնման:

«Աչ որինը» չը լինելով, հողը դրւում է կենտրոնական կամ տեղական ժողովրդական ինքնավար օրգանների, այսինքն, անդաստիարգ գիւղական և քաղաքային համայնքների խնամատարութեան տակ: Արպէս ամբողջ ժողովրդին պատկանող ընդհանուր սեփականութիւն, հողը դուրս է գցւում ապրանքային շրջանառութիւնից, այսինքն արգելւում է գնել կամ ծախել, կապալով տալ կամ վերցնել. նրանից կարելի է միմիայն օգտուել և այս դէպքում՝ իւրաքանչիւրը այնպիսի բաժին է վերցնում, որ կարողանայ մշակել, լինի դասեփական ջանքերով կամ ընկերակցութեամբ: Այսպիսով հողի ունակութիւնների շահագործման իրաւունքը գըն-

ւում է նրա վրայ գործ դրւած անձնական և համայնական աշխատանքով: Այլ իրաւունք հողի վերաբերմամբ, սօց-յեղափոխականների կարծիքով, չէ կարող լինել և չը պիտի լինի:

Եւ այսպէս, սօցիալիստ-յեղափոխականների ռազմական դրօշը դարձարւում է երեք համահասարակ գեղեցիկ լոզունգով՝ ժողովրդական ազատութիւն, աշխատանք և ազատութիւն, հող և ազատութիւն: Գրանց համար էին մտքառում գեկարբիսաները, գրանցով էր ոգևորւում Գերցներ իր համախոհներով, յանուն նրանց էին կուռւմ Ռուսաստանի լաւագոյն մտածողները — Չերնիշևսկի, Լաւրով, Միխայլովսկի: Այդ գաղափարների ազդեցութեան տակ զարգացաւ գեմելքովցիների և նարոգովօլցիների հերոսական ողբերգութեամբ լի էպոպէան: Եւ ահա նոյն դրօշն է, որ բարձր ծածանւում է սօցիալիստ-յեղափոխականների, թէև երիտասարդ, բայց ուժեղ մարտիկների վերայ — ուժեղ՝ Ռուսաստանի յեղափոխական անցեալի հետ ունեցած գաղափարական կապերով, ուժեղ՝ ժողովրդական լայն շարժանների համակրանքով, ռազմական եռանդով, ինքնագոհութեան անսպառ պահեստով:

Արանով վերջացնենք. աւելացնենք միայն, որ սօցիալիստ-յեղափոխականների կուռի եղանակների մասին մենք առիթ կունենանք խօսելու, երբ կանգ կ'առնենք քաղաքական այլ կուսակցութիւնների տակադիպի վրայ:

### III

ՍՕՅԻԱԼ-ԴԷՄՕԿՐԱՏԻԱ

Ռուսաստանում գոյութիւն ունեցող սօցիալիստական երկու կուսակցութիւններից մէկի՝ սօցիալիստ-յեղափոխա-

կանների մասին մենք արդէն խօսեցինք: Այժմ գանք սօցիալ-դէմօկրատներին:

Հասերի համար անհասկանալի է, թէ ինչու Ռուսաստանում գոյութիւն ունեն սօցիալիստական երկու կուսակցութիւններ. աւելի ևս մեծ զարհուրանք է պատճառում այն կծու թշնամութիւնը, որ մինչև այսօր էլ երևում է սօցիալ-դէմօկրատների և սօցիալ-յեղափոխականների միջև:

Եւ, ըստ երևոյթի, ի՞նչպէս չը զարմանալ այդ յամենայն դէպս, ցաւալի երևոյթի առիթով—ցաւալի՝ այն պատճառով, որ մանաւանդ այժմ անհրաժեշտ է միացումը ոչ միայն խիստ-յեղափոխական, այլ և բոլոր զիմապիւր ոյժերի՝ կուելու ընդհանուր թշնամու, ուստական ինքնակալ կառավարութեան դէմ: Ի՞նչպէս չը զարմանալ, երբ կարծես ամեն ինչ տրամադրում է ուստ սօցիալ-դէմօկրատին և սօցիալ-յեղափոխականներին դէպի շահերի համերաշխութիւն և ոչ հակադրութիւն:

Եւ իրօք: 2<sup>է</sup> որ այդ երկու կուսակցութիւնների վերջնական նպատակը միևնոյնն է—վերակազմել ժամանակակից հասարակութիւնը սօցիալիստական հիմքերի վրայ, այսինքն՝ ոչնչացնել մասնաւոր սեփականութիւնն արտադրութեան գործիքների և միջոցների վերաբերմամբ, ոչնչացնել դասակարգային տիրապետութիւնը և համայնացնել ամբողջ ժողովրդի տնտեսական կեանքը: Բայց զրանից, մեր սօցիալ-դէմօկրատների քաղաքական ծրագիրը և քաղաքացիական պահանջներն այնքան նման են սօցիալիստ-յեղափոխականների քաղաքական և քաղաքացիական իդէալներին, որ մենք դրա վրայ կանգ չենք առնի, որովհետև դա կը նշանակէ համարեա ամբողջապէս կրկնել այն ամենը, ինչ որ այդ առիթով ասած է երկրորդ գլխում:

Արեւապէս, սօցիալ-դէմօկրատների մշակած ծրագիրը

քաղաքային պրօլետարների կեանքի պայմանների վերակազմութեան վերաբերմամբ—ի հարկէ կապիտալիստական կարգերի սահմաններում—ըստ էութեան և նոյնիսկ շատ մանրամասնութիւններով զարձեւալ չէ տարբերում այն միջոցներից, որ յանձնարարում են սօցիալիստ-յեղափոխականները՝ բարեխաւելու համար գործարանների, հանքերի և արհեստանոցների բանտօրների վիճակը. այնպէս որ այդ ինչորի մասին էլ՝ երկար խօսելը այստեղ անբարձր կնք համարում:

Արեւմն բանն ի՞նչումն է: Ի՞նչ հիմք ունեն ուստական սօցիալիստների երկու ֆրակցիանների տարաձայնութիւնները, որոնք երբեմն հասնում են անհամբերողութեան, նոյնիսկ մի տեսակ անմիտ, կատաղի թշնամութեան: Ա՞րն է նրանց բաժանող պատճառը:

Կա թաղած է խորը, նա գտնուում է երկու կուսակցութիւնների կողմնակիցների մտածողութեան եղանակների, նրանց փիլիսոփայական հայեացքների մէջ՝ պատմական պրօցէսի էութեան և նրա գործունեների վերաբերմամբ, ինչպէս և պատմական ստեղծագործութեան գործում անհասանելի և գաղափարների ունեցած դերի մասին: Պատմութեան փիլիսոփայութեան այդ հիմնական սկզբունքները տարբեր ձևով հասկանալու հետ կապւած են այն տարաձայնութիւնները, որոնք գոյութիւն ունեն Ռուսաստանի ներկայ պատմական բողեի և մեղանում գործող հասարակական ոյժերի—օրինակ՝ ինտելիգենցիայի և գիւղացիութեան—տարբեր գնահատութեան վերաբերմամբ. իսկ զրանից արդէն բղխում են ծրագրային և տակտիքական զանազան դիտումներ, օրինակ՝ ինչպէս վերաբերել դէպի հողային հարցը և տէրօրը Ռուսաստանում:

Մի կարծաւեսութեան մէջ սօցիալ-դէմօկրատական հայեացքների ամբողջութիւնը ներկայացնել, իհարկէ, անհնարին է: Բայց և այնպէս մենք կաշխատենք առաջ բե-

րել Մարքսիզմի երկու-երեք հիմնական սկզբունքները,—  
ասում ենք «Մարքսիզմի», որովհետև բոլոր սոցիալ-դեմո-  
կրատների համար, ինչ ազգութեան էլ նրանք պատկա-  
նէին, ուսուցիչ և մարգարէ հանդիսանում է Արլը  
Մարքս: Պիտի նկատենք սակայն հետևեալը. մինչդեռ  
ուրիշ երկրներէ, օրինակ՝ Գերմանիայի, սոցիալ-դեմո-  
կրատները իրենց մի քանի էական հայեցակէտերում  
խիստ առաջ են գնացել՝ ուստի սոցիալ-դեմո-  
կրատական մասսան, մեր սոցիալ-դեմոկրատիայի հա-  
սարակ զինուորն երբ, դեռ էլի կրկնում են  
Մարքսիզմի հնացած բանաձևերը, յաճախ բացատրելով  
նրանց ձախ ու ծուռ, շատ պարզամիտ և «հանրամատ-  
չելի» ձևով, միայն ու միայն ցանկութիւնից զրգւած,  
— ինեւ «ամենախեղձ մարքսիստներ: Այդ տեղից է  
զուրս գալիս այն, որ ուստի սոցիալ-դեմոկրատը միշտ և  
ամեն ժամանակ հանդիսանում է «plus marxiste que  
Marx lui-même».

Ահա թէ ինչու մենք կարևոր ենք համարում ամե-  
նից առաջ մասնաճիւղ անել Մարքսի սկզբունքներից մէկը,  
որը մի առանձին ամբողջեամբ բուն է զրել մեր սո-  
վորական սոցիալ-դեմոկրատների գլխում:

Գեռ 1859 թւին Մարքս իր «Քաղաքատնտեսութեան  
քննադատութիւնը» գրածքի մէջ հետևեալ կերպով է  
ձևակերպել իր պատմա-փիլիսոփայական *credo*-ն.

«Նիւթական կեանքի (էկոնոմիկա) արտադրութեան ե-  
ղանակը պայմանաւորում է նրա հասարակական, քաղա-  
քական և հոգեկան կազմը: Մարդկանց զիտակցութիւնը  
չէ՛ որ որոշում է նրանց կեցութիւնը, այլ նրանց հասարա-  
կական կեցութիւնն է, որ որոշում է նրանց զիտակցութիւնը»:

Այդ միտքը սովորաբար հասկացում է այսպէս:—  
Առաջադրական պատմութիւնը, այսինքն՝ որևէ երկրի քա-  
ղաքական կազմը, իրաւական կարգերը, հասարակական և

քննասնական յարաբերութիւնները, գրական և գեղար-  
ւեստական ճաշակը, գիտական, փիլիսոփայական, բարո-  
յական և կրօնական հայեացքները պայմանաւորում են  
նոյն երկրի տնտեսական կեանքով:— բնական տնտեսու-  
թեան ժամանակ այդ ամենը կրում է մի գոյն. զրամական  
կամ կապիտալիստական տնտեսութեան ժամանակ՝ զրանք  
կրում են մի այլ գոյն. իսկ սոցիալիստական տնտեսու-  
թեան պահուն՝ նրանք կունենան տարբեր գոյն, համա-  
պատասխան տնտեսական կեանքի այդ ձևին: Աւրիշ խու-  
քով՝—պատմութիւնը շարժող ոյժը համարում է տնտե-  
սութիւնը (էկոնոմիկան). նա կազմում է, այսպէս աւած՝  
այն հիմունքը, որի վրայ կառուցւում է ժողովրդի հա-  
սարակական-քաղաքական ամբողջ շէնքը: Գա զեռ քիչ է.  
նոյնիսկ այդ ժողովրդի մտքի ու խղճի ամբողջ աշխա-  
տանքը—գրականութիւն, գեղարւեստ, գիտութիւն, բա-  
րոյականութիւն, կրօն—ուղղակի և լիակատար կախումն  
ունի նրա տնտեսութիւնից, որովհետև, — կրկնենք Մարք-  
սի խօսքերը) — «մարդկանց զիտակցութիւնը չէ որ որո-  
շում է նրանց կեցութիւնը, այլ նրանց հասարակական  
կեցութիւնն է, որ որոշում է նրանց զիտակցութիւնը»:

Ի՞նչպէս, կը հարցնէք դուք. մի՞թէ ժողովրդի քա-  
ղաքական կեանքի մէջ առաջացող փոփոխութիւնները չեն  
ազդում նրա տնտեսական կեանքի վրայ: Մի՞թէ հանրա-  
պետական կառավարութեան օրով հնարաւոր են միևնոյն  
պահասութիւնները ժողովրդական տնտեսութեան կազմի  
մէջ, ինչ որ միահեծան նքնակայութեան օրով: Մի՞թէ  
մարդկանց միջև իրաւական յարաբերութիւնները փո-  
փոխուելով, փոփոխութեան չեն ենթարկւում, — գոնէ ո-  
րոշ չափով — նաև նրանց տնտեսական յարաբերութիւն-  
ները: Մի՞թէ գիտութիւնը, բարոյականութիւնը և կրօնը  
— մեծ գիտնականների, բարոյագէտների և կրօնական  
վերանորոգիչների մտքերը — չեն ազդում այս կամ այն

եղանակով, ուղղակի կամ անուղղակի ձևով, ժողովուրդներին անտեսական գործունէութեան բնոյթի և ուղղութեան վրայ: Մի՞թէ մարդիկ—չէ՞ որ պատմութիւնը ինքն իրեն չէ առաջ գալիս, այլ նրան ստեղծում են մարդիկ,—իրենց գործողութեան մէջ ամենից առաջ և աւելի զեկազարւում են անտեսական շահերով:

«Այո՛, այդ բոլորը «վերնաշէնքեր» են անտեսական «հիմունքի» վրայ և այդ պատճառով պատմութեան մէջ չեն խաղում ինքնուրոյն, ստեղծագործող դեր», պատասխանում են մեր սովորական—սօցիալ դէմօկրատները, թէ և համաշխարհային սօցիալ-դէմօկրատիայի միւս ուսուչիչը՝ Ֆրէդրիխ Էնգելսը, վերևում զբառ հարցերի առիթով հետևեալ «ուշագրաւ խոստովանութիւնն է անում.

«Եթէ մեր հետևորդները,—ասում է նա վերջերս հրատարակած իր նամակներից մէկում,—անտեսական կողմին երբեմն աւելի նշանակութիւն են վերագրում, քան հարկաւոր է, դրանում մասամբ Մարքսն ու Էսենք մեղաւոր: Մե՛, հակառակորդների վերաբերմամբ, մենք ստիպւած էինք ընդդէմ այն հիմնական սկզբունքը, որ նրանք ժխտում էին. բայց ժամանակը, աեղը և հանգամանքները միշտ թոյլ չէին տալիս հարկաւոր չափով ուշագրութիւն նւիրել փոխազգեցութեանը մասնակցող մընացած մօմէնտներին»:

«Աւելի արտացոլացումը՝ նրան մասնակցողների ուղեղներում» իբրև քաղաքական, իրաւաբանական և փիլիսոփայական տեսութիւններ, կրօնական հայեանքներ, որ զարգանում դառնում են դաւանական սխառեմներ,—այդ բոլոր մօմէնտները, ասում է Էնգելս մի այլ նամակում, իրենց հերթին նոյնպէս ազդում են պատմական կուլտիւրն ընթացքի վրայ և շատ

դէպքերում գլխաւորապէս դրանք են որ ուշում նրա ձեռք: Այդ բոլոր գործօնների փոխազգեցութեան անհրաժեշտ արդիւնքը հանգիստնում է... անտեսական շարժումը»...

Սակայն չը նայելով այդ բոլոր լրացումներին, Էնգելսը և նրա հետ միասին ամբողջ սօցիալ-դէմօկրատիան շարունակում են պնդել, որ պատմութեան մէջ որոշիչ գործօնը, վերջի վերջոյ, հանդիսանում է էկօնօմիկան: Ահա հէնց այդ հայեցակէտը, մանաւանդ որոշ չափով պարզացրած և աղաւաղած մեր գեր-մարքսիստների կողմից, չեն բաժանում սօցիալիստ-յեղափոխականները, որովհետև նրանք ընդունում են պատմութեան պրօցէսի բազմակողմանիութիւնը և պատմական գործօնների բազմազանութիւնը, որոնց թւում ոչ աննշան և լիապէս ստեղծագործող ինքնուրոյն գեր են յատկացնում գաղափարներին և նրանց կրօններին, «քննադատօրէն խորհող անձերին»:

Գրանից է ահա առաջանում մեր սօցիալիստական կրկու բաժանումների առաջին էական տարածայնութիւնը: Այս և մի ուրիշը, կրկին տեսական և ոչ նւազ կարևոր:

Սօցիալիզմին կարելի է հասնել միայն նրա «հակադրութեան միջոցով»—կապիտալիզմի միջոցով—այդպէս է ասում սօցիալ-դէմօկրատիական աւետարանի պատերիստները մէկը: Այդ պատերիստը ուղիղ 58 տարեկան է: Առաջին անգամ նա արտայայտեց Մարքս-Էնգելսի «Վօմմունիստական մանիֆէստում»: Չը նայելով որ այդ տարիների ընթացքում նա ենթարկեց բազմաթիւ դաժան փորձութիւնների, չը նայելով որ նրա փիլիսոփայական նախահիմքերը լիակատար «Ֆիասկօ» կրեցին՝ զարնելով կենդանի իրականութեան հետ, ժամանակակից սօցիալ-դէմօկրատիան գեո



շարունակում է կրկնել այլ և այլ կերպերով նոյն բանը, ձևափոխելով և յարմարեցնելով «Վոմմոնէիստական մանիֆէստի» յայտնած միտքը կեանքի փոփոխուած պայմաններին:

Յայտնի է, որ «Վոմմոնէիստական մանիֆէստի» հեղինակները գրել են իմիջի այլոց և հետեւեալը.

«Ներկայ բուրժուական հասարակութիւնը, որ կարծես կախարչութիւնով է ստեղծել արտադրութեան և փխտանակութեան այդքան զորաւոր միջոցներ, նման է այն կախարդին, որը չի կարողանում տիրապետել իր գուրս կոչած ստորերկրեայ ոյժերին... բաւական է յիշել առևտրական ճգնաժամերը, որոնք իրենց պարբերական կրկնութեամբ միշտ աւելի և աւելի սպառնում են բուրժուական ամբողջ հասարակութեան գոյութեանը»:

Այդ նշանակում է ահա թէ ինչ.—կապիտալիզմն ինքն իր մէջ է կրում իր կործանման աղբիւրը, որովհետեւ նրա մէջ զբաւած է տարերային մի ձգտում՝ գէպի անսահման աճեցողութիւն, որը բնականօրէն և անհրաժեշտաբար տանում է գէպի աւել-արտադրութիւն. իսկ աւել-արտադրութիւնն ստեղծում է ճգնաժամեր, որոնք կորստաբեր աղղեցողութիւն են անում կապիտալիզմի վիճակի վրայ և, վերջ ի վերջոյ, կը գլորեն նրան, ուրեմն և բուրժուակալային՝ գերեզման: Այդ փառահեղ հիպոթէզի տրամադրութեան տակ կար նաև մի այլ լրացուցիչ օժանդակ հիպոթէզ: Վերջինիս էութիւնը այն էր, որ կապիտալի աճման պրօցեսի ժամանակ՝ կապիտալիստներ թիւը շնորհիւ նրանց մէջ գոյութիւն ունեցող դաժան կուլի, քանի գնում աւելի և աւելի քանում է: «Կապիտալիստական արտադրութեան վերջնական հետեւանքը, գրում էր երբեմն Վիլհէլմս իր «Zur Grund-und Bodenfrage»-ի մէջ, լինելու է սեփականութեան հարստութիւնն երբ և

իշխանութեան կենտրոնացումը մի և նոյն ձևաքերում: Միակ մի լէնդլորդ, տէր և տիրական բոլոր հողերի ու գործարանների—մի հօտ և մի հովիւ, մի ճորտատէր, որ իր խարաղանով աշխատանքի է քշում իր գիւղական և քաղաքային ստրուկներին—ահա ներկայ կապիտալիստական կուլտուրայի ծայրակէտը, նրա վախճանական նպատակը և իգէալը»: Եւ իհարկէ միացած «ստրուկների» համար շատ հեշտ կը լինէր գերեզման գլորել այդպիսի «մի միակ լէնդլորդին»:

Սակայն կապիտալիզմի ինքնաջնջման այդ սրտաուռ թէօրիան—ինքնաջնջումն ճգնաժամերի և «բոլոր հարստութիւնների ու իշխանութեան մի քանի ձևաքերում կենտրոնացման» ճանապարհով—այժմ սօցիալ-գէմօկրատիական բոլոր նորագոյն թէօրէակիոնները մի կողմ են թողել: Եւ ահա թէ ինչու: Լաւ յայտնի է, որ, նախ և առաջ, կապիտալիստների թիւն իսկապէս աւելանում է, ոչ թէ պակասում. իսկ երկրորդ՝ կապիտալիզմը սովորել է արդէն ապահովել իրեն ճգնաժամերից,—որոնք կապուած են անտեսական կեանքում տիրող անիշխանութեան հետ—արդիւնաբերական ամեն տեսակ սենզիկաաներով և արտաքին ու ներքին շուկաներն անընդհատ մեծացնելով, այնպէս որ ժամանակակից բուրժուակալիստ այժմ իրեն զգում է գուցէ շատ աւելի կայուն, քան այն երջանիկ ժամանակները, երբ «Վոմմոնէիստական մանիֆէստն» այնքան համարձակօրէն մարգարէանում էր նրա անխուսափելի և շուտափոյթ կործանումն իր սեփական ցանցերում: Սակայն՝ չը նայելով այդ ամենին, սօցիալ-գէմօկրատիան ընդհանրապէս և մեր արձագանք-սօցիալ-գէմօկրատիան բանաւորական սօցիալիստական շարժման յաջողութիւնն ուղղակի կերպով կապակցուած է կապիտալիստական անտեսութեան յաջողութեան հետ:

1895 թվին՝ Բրեսլավի սօցիալիստական կոնգրէսում Բէրէլը յայտնեց, որ ինքը կարող է ընդունել միայն այնպիսի մի ազրաբային նախագիծ, որը «է խանգարում հասարակութեան կապիտալիստական զարգացումը»: Այն էնայի սօցիալիստական կոնգրէսում՝ աւստրիական սօցիալ-դէմոկրատիական կուսակցութեան առաջնորդ Ազլէր աւելի ևս պարզաբար խօսեց այդ հարցի մասին: «Մենք, ասաց նա, պէտք է պաշտպանենք արտադրական ուժերի տեխնիքական զարգացումը և աճեցողութիւնը այնչափ, որչափ որ նրանք նախապատրաստում են սեփականութեան համայնացրած ձևի հոգեկան և նիւթական պայմանները. մենք պէտք է ծառայենք այդ զարգացմանը, և այնտեղ, ուր խնդիրը վերաբերում է այդ նախնական պայմաններին՝ մենք պէտք է բողոքովին գիտակցաբար օգնենք նրանց շուտափոյթ ծագմանը»:

Ահա հէնց այդ միտքը—ինչ կուզէ լինի՝ անհրաժեշտօրէն պաշտպանել կապիտալիստական արդիւնաբերութիւնը—մի միտք, որ պաշտպանում է նաև ուսսական սօցիալ-դէմոկրատիան—չեն ընդունում սօցիալիստ յեղափոխականները. սօցիալիստ յեղափոխական կուսակցութիւնը չէ ընդունում ներկայ արդիւնաբերութեան հիմքերը ցնցելու վերաբերմամբ եղած երկիւղը, որ պաշարել է նաև մեր սօցիալ-դէմոկրատներին: Եթէ բուրժուազիան և պրօլէտարիատը, ասում են սօցիալ-յեղափոխականները, իրար թշնամի են ըստ էութեան, եթէ այդ երկու կուռղ դասակարգերի շահերն անհաշտելի և հակադիր են, հնարաւօր է ուրեմն, որ նրանց ապագան կառուցելի միևնոյն հիմքերի—կապիտալիզմի աճեցման և զարգացման վրայ: Դա ակներև անմտութիւն է: Այն փաստից, որ կապիտալիստօրէն զարգացած անտեսութիւն ունեցող երկրներում բանուորական

շարժումն աճում է,—այդ փաստից դեռ ևս չէ հետևում, որ բացի կապիտալիզմից՝ չը կան այլևս ուրիշ ուղիներ դէպի սօցիալիզմը. սօցիալիստական գիտակցութիւնը մասսաների մէջ աճը պահպանում է ոչ թէ կապիտալիզմի կապանքներին շնորհօք, այլ հակառակ նրանց: Եւ իսկպէս՝ խօսէ կարելի պրօլէտարական զարգացման փութը անհրաժեշտութիւնը բուրժուական կարգերի շրջանակում՝ դարձնել անխուսափելի թէօրթա, որի վերայ իբր թէ անհրաժեշտ է կառուցանել ծրագրային և տարտիքական բոլոր հաշիւները: Այնտեղ, ուր ինքը պատմութեան ընթացքն աւել է բարեյաշող պայմաններ երկրի կապիտալիստական զարգացման համար—ինչպէս օրինակ՝ Անգլիայում կամ Գերմանիայում—այնտեղ ծիծաղելի է յանձնարարել խնայող վերաբերմունք դէպի նա, ծիծաղելի է այն պաճառով, որ պրօլէտարական շարժումը փաստօրէն չէ կարող խանգարել այդ զարգացումը: Այնտեղ, կը նշանակէ, մնում է մի բան, օգտուել բուրժուական կարգերի շրջանակում բոլոր հնարաւոր միջոցներից՝ զարգացնելու աշխատուոր մասսաների սօցիալիստական գիտակցութիւնը:

Սօցիալ-դէմոկրատներին և սօցիալ-յեղափոխականներին միջև տարածայնութեան մի էական կէտ ևս կայ:

Սօցիալ-դէմոկրատները ենթադրում են, որ Ռուսաստանում սօցիալիստական մկրտութեան ենթակայ է միայն քաղաքներին՝ պրօլէտարիատը իսկ գիւղացիութիւնը—մանր բուրժուական, յետադիմական—չէ ենթարկւում սօցիալիստական պրօպագանդի, որովհետև նա ամբողջապէս խմորած է մանր սեփականատիրական բնազդներով: Ճշմարիտ է, ներկայ ուսական գիւղացիութեան յեղափոխականութիւնը մեր սօցիալ-դէմոկրատիան այժմ արդէն չէ մերժում: Բայց, ասում է նոյն սօցիալ-դէմո-

կրատիան, մանր—բուրժուազիան իր պահանջների կրակահանցման համար յեղափոխական լինելուց մինչև լայն, միջազգային սօցիալիստական դոկտրինը—գեո շատ հեռու է:

Սօցիալ-յեղափոխականներն, ընդհակառակը, խիստ սահմաններ չեն դնում քաղաքային պրոլետարի և աշխատաւոր գիւղացիութեան միջև: Այդ պատճառով նրանց մարտական գրոշակի վրայ գրած է պաշտպանել ուսս ժողովրդի բոլոր աշխատաւոր, կեղեքած տարրերը, առանց հաշի առնելու, թէ որտեղ են նրանք ճորտացրած գաշտում թէ գործարանում, գիւղում թէ քաղաքում:

Մենք արդէն ասացինք, որ մեր մարքսիստների ընդհանուր տեսական հայեացքների հետ կապւած են նրանց ա գ ր ա ր ա յ ի ն ծ ր ա գ ի ը ր և մ ար ա կ ա ն տ ա կ տ ի ը ր:

### IV

#### ՀՈՂԱՅԻՆ ԽՆԴԻՐԸ

Ռուսական սօցիալ-դեմոկրատների ծրագրում:

Ամեն մի դոգմ, ինչքան էլ առաջին տնգամից տարրինակ թւայ մեր ասածը, իր մէջ օպպորտիւնիզմի սաղմեր ունի:

Անդամի իրականութիւնը—բազմերանգ ու բազմաձև—ինչպէս յայտնի է, չի պարփակուում միակողմանի և իսկապէս միշտ մեռած գոգմատիզմի նեղ շրջանակում: Նա, այդ իրականութիւնը շատ էլ չի նայում վերացական մտքի կառուցումներին, ինչքան էլ սրանք ամբողջացած, տրամաբանական ու սիրուն լինեն, և անխնայօրէն փշրում է բոլոր դոգմերը, եթէ մարդը իր դատողութեան ընթացքում՝ հաշի չի առնում կ և ա ն ք ի բ ար գ ու թ ի լ է ն ը և, ըստ կարելոյն, նրա բազմազան պահանջները: Ինքնավստահ և ինքնահաստատ գոգմատիզմը յա-

ձախ մոռանում է այդ, և այդ պատճառով էլ բաւական զգալի «պոպոկներ» է ստանում կեանքից.—կեանքը ծաղրի է հանում նրան, վայր է գլորում իր սիրուն, բայց անհաստատ գիւրքից և թեքում է նրան դէպի իր վաղանցուկ ու յաճախ քմահաճ պահանջները, և այսպիսով հպարտ գոգմատիկներին դարձնում է օպպորտիւնիստ: Չգտելով կենսունակ լինելու սեփական գոյութեան կըռուում, դոգմը կորցնում է իր հիմնական գծերը—և ձեւփոխուում է յարաշարժ իրականութեան փաստերի համաձայն, յարմարուում է որ ոչ մի ջա վ ա յ ը ի, որ ոչ պատմական վ ա յ ը կ ե ա ն ի, որ ոչ իր ա կ ա ն ու թ ե թ ի յ ար ա բ ե թ ու թ ե ա ն առ ա ն ձ ն ա յ ա տ կ ու թ ի լ է ն ն եր ի ն: Այս բանը ամենից լաւ կարելի է ստուգել, դիտելով այն կախարդական փոփոխութիւնները, որոնց ենթարկւեց, վերջին երկու-երեք տարւայ ընթացքում, հողային հարցի մեկնութիւնը՝ սօցիալ-դեմոկրատների ծրագրում:

Ի՞նչ էին ասում նրանք ուսս գիւղի մասին առաջ և ինչ են ասում այժմ: Երեք տարի առաջ ի՞նչ դեր էին տալիս նրանք գիւղացիներին յեղափոխական կոււի մէջ, և հիմա ինչ յոյս են դնում նրանց վրայ: Ի՞նչ էին խոստանում գիւղացիներին իրենց ծրագիր—*minimum*-ով այն ժամանակ և ի՞նչ են խոստանում այսօր: Մարդ ուղղակի ապշում է տեսնելով, թէ ի՞նչ հակայ քայլերով կարող է բարեշրջւել «ամբողջացած» ոսկրացած դոգմը անողոր ճակատագրի՝ այսինքն իրական կեանքի հարւածների տակ, որին խաբել չի յաջողուում ոչ մի խորամանկութեամբ...

Գիւղացիութիւնը, իր էութեամբ, «յետադիմական» է. «պուշ գիւղը» երբէք չի կարող ըմբռնել քաղաքի պրոլետարիատի իդէօլոգիան. գիւղացիները մինչև իրենց ոսկորի ծուծը ներշնչւած են կալսածատիրական, «մանր

բուրժուական՝ բնագոյներով, — ուստի կանչել նրանց սօցիալիզմի համար կուռոյ «յեղափոխական» պրօլետարիատի շարքերը, կը նշանակէր տարւել իսկական ուսուցիչայով, «քաղաքական արկածախնդրութեամբ», մի բանդագուշանբով, որ միայն «սօցիալիստ-յեղափոխականներին» է վայել:

Այսպէս էին դատում գիւղացիութեան մասին սօցիալ-դէմօկրատները, հետեւելով երեք աւետարաններին՝ Մարքսի, Էնգելսի և Ասուցիւոյ, այսպէս էին բնորոշում նրանք տարբեր կերպով խորհող մարդկանց:— Անշուշտ դուք լաւ յիշում էք այն թուեցալի անականները, ինչպէս օրինակ՝ «ուսուցիչներ» — հետն էլ անպատճառ կցած «մանր բուրժուական» — «արկածախնդիրներ», «սօցիալիստ-յետադիմականներ» (փոխանակ ասելու՝ «յեղափոխականներ», այս մէկը Պլէխանովի սրամտութեան պատկն էր) — անականներ, որոնք վերաբերում էին սօցիալիստ-յեղափոխականներին, որոնք, ինչպէս գիտէք, մե քիչ ուրիշ կարծիք ունէին «պարզ գիւղի» գերի մասին՝ ուսու ազատարար շարժման մէջ:

Հարց. ի՞նչ հիմք ունէր սօցիալ-դէմօկրատներին այդ վերաբերմունքը դէպի գիւղացին:

Արդիւնաբերական երկրներում, ուր կայ ուժեղ կերպով դարգացած կապիտալիզմ, գիւղացիութիւնն, յերաւել, աւելի պահանջողական է քան քաղաքի բանուորութիւնը, և հեշտութեամբ չի ենթարկւում յեղափոխական պրօպագանդին: Այստեղից *a priori* այն եզրակացութիւնը դուրս բերին, որ ուրեմն ուսու գիւղացիութիւնն ևս անպատճառ պէտք է որ յետադիմական լինի, հէնց միայն նրա համար, որ նա գիւղացիութիւն է և հետեւաբար իր հոգեբանութեամբ պէտք է որ նման լինի բոլոր քաղաքակիրթ երկիրների ժամանակակից գիւղացիութեան:

Յետոյ, յայտնի է որ գրամատիրութեան գասական երկրում՝ Անգլիայում, ինչպէս նաև միւս արիւր գրա-

մատիրական երկրներում արդիւնաբերութեան և քաղաքային պրօլետարիատի աճումը կատարւում էր ի հաշիւ գիւղական մանր տնտեսութիւնների անկման և գիւղական դասի աղքատացման: Այստեղից դարձեալ *a priori* այն եզրակացութիւնը հանեցին, որ ուրեմն մեզանում ևս՝ արդիւնաբերութեան և քաղաքների պրօլետարիատի աճումը, ինչպէս նաև բանուորական շարժման յաջողութիւնները ուղղակի պատճառական կապով կապւած են գիւղական մանր տնտեսութիւնների ոչնչացման և գիւղի «պրօլետարացման» հետ: Գիւղացին, ասում էին մեր սօցիալ-դէմօկրատները, պէտք է լիովին կարելի հողից, պէտք է «եփւի գործարանի շոգեկաթսայում», և այն ժամանակ միայն նրա շահերը կը ձուլեն բանուոր դասի շահերի հետ, այն ժամանակ միայն նրա առաջ կը բացեն լայն հեռանկարները լաւագոյն ապագայի, այն ժամանակ միայն նրան հասկանալի ու սրտին մօտ կը գտունայ «պրօլետարիատի իրէօլօգիան», այն է՝ սօցիալիզմը: Իսկ բանի դեռ գիւղացին հող ունի, «սեփականութիւն» ունի, թէկուզ մի ողորմելի հողաբաժին, որի վրայ հազիւ հազ քաշ է գալիս մի կերպ — մինչև այդ, նրա շահերն, իբրև «սեփականատէր» դասի շահեր, «բուրժուական» են և ինչպէս այդպիսին — «անհաշտելի» են արդիւնաբերական պրօլետարիատի շահերի հետ. գիւղացին ամեն տեղ եղել է *status quo*-ի կողմը և սօցիալիզմին հակառակ. այդպէս էլ կը լինի և մեզանում: Ահա, իսկն ասած, այն «հասարակական փիլիսոփայական» տեսակէտ կոչւածը, որ ունէին մեր սօցիալ-դէմօկրատները գիւղի և գիւղացու վրայ՝ Ռուսաստանի նախայեղափոխական շրջանում: Այս հիմքերի վրայ էլ հաստատուեց նրանց հողային ծրագիրը՝ մօտիկ անցեալում:

Այդ ծրագրի ծուծը հետեւեալն էր. պէտք է ուսու գիւղի կեանքից հեռացնել այն ամենը, ինչ որ խանգար-

րում է խոշոր հողատիրութեան զարգացման ի հաշիւ մանր հողատիրութեան, ինչ որ արգելք է հանդիսանում «դասակարգերի կուլին» գիւղի ներսում; ինչ որ կասեցնում է «գիւղի պրօլետարացումը»<sup>1</sup> Իսկ որպէսզի գիւղացիները չը կոտորւին մինչև այն օրհնեալ րօպէն, երբ կ'իրականանայ «գիւղի օրհնեալ պրօլետարացումը», պէտք է տալ գիւղացիներին... «հողամասեր»<sup>2</sup>։ Թող ապրեն, ասում են, ի փառս գալիք սօցիալիզմի և նրա բազմիմաստ մեկնաբաններին...

Սակայն կեանքը շատ դառը ծիծաղեց այդ, այսպէս ասած, կենդանաբանական սօցիալիզմի վրայ.— կեանքի հարւածների տակ՝ մեր սօցիալ-դէմօկրատները քայլ առ քայլ՝ թէև մեծ շփոթութեան մէջ, յետ էին քաշուում իրենց «առաջակալ»<sup>3</sup>, անգր-գիտնական դիրքերից, մինչև որ վերջապէս սկսեցին խօսել «հողի ազգայնացման» մասին. Բանից դուրս եկաւ, որ գիւղացիական մասսան այնքան էլ «յետադիմական» չէ, ինչպէս այդ մարգարէանում էին ուս մարքսիստները։ Բանից երևաց, որ նրանք դէմ չեն նոյնիսկ յեղափոխութեան, եթէ միայն նա ընթանում է «հող և ազատութիւն» դրօշը ձեռին. երևաց, վերջապէս, որ նրա գիտակցող տարրերը շատ հեշտութեամբ ոչ միայն հասկանում, այլ և իւրացնում են պրօլետարիատի իդէօլօգիան, այսինքն սօցիալիզմը։ Եւ ահա սօցիալ-դէմօկրատների գիտակցութիւնը լուսաւորւելու հետ, որ մըթագնել էր սօցիալիստ-յեղափոխականների դէմ ունեցած թշնամութիւնից, վերափոխուում է նաև նրանց հայեացքը դէպի գիւղացիութիւնը, ինչպէս դէպի յեղափոխական մի ոյժ, կերպարանափոխուում է նրանց տեսակէտը գիւղումն անելիք պրօպագանդի և ագիտացիայի վրայ, լայնանում է նրանց հողային ծրագիրը։

Գաղափար տալու համար՝ թէ ներկայումս ի՞նչ են մտածում սօցիալ-դէմօկրատները հողային հարցի մասին,

մենք կը բերենք մի քանի քաղաքներ ուսական սօց-դէմօկ. կուսակցութեան վերջին «միացուցիչ» ժողովի որոշումներէրից։ Ահա թէ ինչ է ասած «Գիւղացիական շարժումը» հատւածի մէջ։

«Նկատելով, որ հողի համար և ոստիկանական բիւրօկրատական կազմի դէմ կռիւ մղող գիւղացիութիւնը ներկայումս հանդիսանում է յեղափոխական դասակարգ... ուս Ս. Գ. Բ. Կ. միացուցիչ ժողովը որոշում է. 1) ամեն կողմով ներգործել գիւղացիութեան վրայ, կապելու նրա տնտեսական պահանջները՝ ներկայ վայրիկանի քաղաքական խնդիրներին. 2) Ստեղծելով ամեն տեղ, ուր այդ հնարաւոր է, սօցիալ-դէմօկրատական կազմակերպութիւններ գիւղատնտեսական բանուրութեան մէջ, միաժամանակ աջակցել նաև ամբողջ գիւղացիութեան կազմակերպւելուն՝ մի կողմից մտցնելով նրան գիւղացիական միութեան մէջ, որքան որ այդ միութիւնը անկուսակցական կը մնայ,—միւս կողմից կազմել գիւղական կօմիտէներ, գիւղական պատգամաւորների խորհուրդներ և այլն—կապելով սրանց ինչպէս իրար հետ, այնպէս էլ քաղաքի պրօլետարական կազմակերպութիւններին հետ և ձգտելով ազդել նրանց ծրագրի և տակտիքի վրայ սօցիալ-դէմօկրատներին ցանկալի ուղղութեամբ»<sup>4</sup>։

Ահա և «միացուցիչ» ժողովի հողային ծրագրի ամենաէական կէտերը։ Գուրս է գալիս, որ այժմ մեր սօց-դէմօկրատները պահանջում են.

1) Գրաւել եկեղեցական, վանական, ուղեւային և կաբինետային բոլոր հողերը և պետական հողերի հետ միասին յանձնել տեղական ինքնավարութեան խոշոր օրգաններին,

<sup>1</sup>Այս եւ յետագայ հարւածները մեզ վերցրիք Լենինի քօքիւի յաւելածից, որ կոչոււմ է՝ «Տեղեկագիր Ռ. Ս. Գ. Բ. Կ. միացուցիչ ժողովի», Մոսկվա, 1906:

որանք միայնուժ են քաղաքային և գիւղական շրջանները:

2) Գրաւել մասնաւոր սեփականութիւն կազմող բոլոր հողերը, բայց մանր հողաբաժիններից և յանձնել նրանց ի կարգադրութիւն՝ ռամկավար սկզբունքներով ընտրւած՝ տեղական ինքնավարութեան խոշոր օրգաններին:

Ահա այսպէս է վճռել խնդիրը «միացուցիչ» ժողովրդի ջիջելով կեանքի հզօր պահանջներին:

Այսպէս ուրեմն՝ առաջ «հողամասեր» էին, այժմ դարձան... «գրաւում»:

Չը մոռանանք սակայն ասել որ սօցիալ-դեմօկրատների «միացուցիչ» ժողովում «մեծամասնութիւն» կոչւող պատկառելի հատուածի ներկայացուցիչները հակած էին իրենց զիջումներով աւելի հեռուն գնալու: Նրանք պընդում էին, որ պէտք է «հիմնել գիւղացիական կօմիտէներ... գրաւած հողերի իրական կարգադրութեան համար, մինչև որ ընդհանուր հիմնադիր ժողովը կը հաստատէ հողատիրական նոր կարգեր»։ Նրանք պնդում էին, որ երբ յեղափոխութիւնը կատարեալպէս յաղթանակէ և ռամկավար հանրապետութիւնը հաստատուի, սօցիալ-դեմօկրատները պարտաւոր են «պաշտպան հանդիսանալ յեղափոխական գիւղացիութեան ձգտումներին՝ վերացնելու հողի մասնաւոր սեփականութիւնը և ջանալ բոլոր հողերը դարձնել պետութեան սեփականութիւն, կամ լաւ ևս՝ համայն ժողովրդի ընդհանուր սեփականութիւն»:

Այս արգէն ոչ միայն հողերի «գրաւումն» է, այլ և «ագգայնացումը», կամ նոյնիսկ, եթէ կուզէք, «սօցիալիզացիան», «հողի ա՛յն սօցիալիզացիան», որ այնպէս յամառութեամբ առաջարկում են սօցիալիստ-յեղափոխականները և որից նոյնքան յամառութեամբ հրաժար-

ւում են սօցիալ-դեմօկրատները: Սակայն սօցիալ-դեմօկրատները առաջւայ պէս համոզւած են, որ թէ հողերի «գրաւումը», թէ նրանց «ագգայնացումը» և թէ «ամբողջ հողը համայն ժողովրդի սեփականութիւն դարձնելը» պէտք է միայն նպատեն «դասակարգային կուլի ազատ դարգացմանը գիւղում» (ibid): Այսինքն, ուրիշ խօսքով, նրանք ենթադրում են, որ դասակարգային կուլը գիւղում անխուսափելի է, որ միևնոյն է՝ գիւղացին պէտք է հողային դրամագլխի գերին դառնայ, որ մինչև իսկ «ամբողջ հողը համայն» ժողովրդի սեփականութիւն դարձնելը՝ չի կարող կասեցնել գիւղի աղքատացումը (պրօլետարացումը): Թէ ինչո՞ւ և ինչպէս է այդ դուրս գալիս, մենք, ճիշտն ասած, հրաժարւում ենք հասկանալ. բայց արամադիր ենք կարծելու, որ այստեղ էլ դեր է խաղում հին թթխմորը, որից նրանք չեն կարողանում հրաժարուել, չը նայած նրանց բոլոր առաջագիմութեանը՝ ուստ կեանքի իրական պահանջներն ըմբռնելու գործում: Եւ ի՞նչպէս հրաժարուեն Մարքսիզմի աւետարանիչները ենթադրում են, որ գիւղը պէտք է քայքայել, նա պէտք է գնայ կապիտալիզմին ծառայելու և նրանից բան սովորելու: Գէ՛, եթէ նրանք այդպէս են ենթադրում, եթէ magister dixit, ուրեմն նշանակում է այդպէս էլ պէտք է լինի, և ոչ մի «ագգայնացում» և «սօցիալիզացիա» ոչ միայն չեն փրկի գիւղացիութիւնը դրամատիրութեան շղթաներից, այլև, ընդհակառակը, նրան կը բերեն կը հասցնեն «դասակարգային կուլի ազատ դարգացմանը գիւղում»: Մի խօսքով մարդու ճակատի գրածը չի ջնջուի...

Թո՛ղ այդպէս լինի. թո՛ղ սօցիալ-դեմօկրատները շարունակեն մտիթարուել, որ իրենց հողային նոր ծրագրով նրանք ամենևին չեն ազարտում իրենց դօգմի «մաքրութիւնը», առաջւայ պէս հաւատարիմ են մնում Մարքսիզ-

մի հիմնական կէտերին: Արեւորն այդ չէ. կարեօրն այն է—կարեօր ոչ թէ սօցիալիստ-յեղափոխականների ինքնասիրութեան, այլ ուս յեղափոխութեան համար—որ նրանք խոստովանում են հողի «գրաւման» և «ազգայնացման» անհրաժեշտութիւնը. կարեօրն այն է, որ նրանցից շատերը հեռու չեն գիտակցաբար ձգտելու՝ «հողը դարձնել համայն ժողովրդի ընդհանուր սեփականութիւն»: Իսկ երբ ժամանակը հասնի, ժողովուրդն ինքը կը որոշէ թէ ինչպէս շահագործէ այդ «ընդհանուր սեփականութիւնը», արդեօք «մասնաւոր սեփականութեան» թէ «ընկերակցական հողատիրութեան» սկզբունքների համաձայն:

Պէտք է, սակայն, աւելացնել, որ սօցիալիստ-յեղափոխականները այնուամենայնիւ կատարեալ իրաւունք ունեն յաղթանակող համարելու: Գեւ ևս 1902 թ., երբ սօցիալ-դէմօկրատները այնքան բարեացակամօրէն զիջում էին «աչլութեան» մէջ դեգերող գիւղին իրենց երեւելի «հողամասերը», սօցիալիստ-յեղափոխականները գրում էին. «Մենք պէտք է հողով կոչ անենք գիւղացուն դէպի Ազատութիւն և ազատութեան միջով նրան տանենք դէպի Հողը»\*: Եւ մի՞թէ նոյնը չեն ասում հի մ ա շ ո թ ս ա ա Ր ի յ և տ ո յ, ուս սօցիալ-դէմօկրատները. մի՞թէ այս բոպէիս այդ չէ նրանց զիրքը դէպի գիւղացիութիւնն ու հողային հարցը...

Մենք կուզենայինք խօսել այս գլխում սօցիալիստ-յեղափոխականների և սօցիալ-դէմօկրատների միջև եղած տարաձայնութեան մի ուրիշ կէտի մասին ևս,—այն է այդ երկուսի վերաբերմունքը դէպի տէրօրի նպատակայարմարութիւնը՝ իբրև մի յեղափոխական միջոցի՝ ու-

\* «Մագրի և սակսիփի նարցեր» ժողովածու «Յեղափոխական Ռուսաստանի» յօլւածներից, 1903:

տիկանական-բիւրօկրատական կարգերի դէմ կուսելու գործում: Բայց այս անգամ այսքան բաւական է, մասնաւոր որ յեղափոխական տակտիքի մասին աւելի յարմար է խօսել, երբ մենք կը դիմենք մեր «խաղաղասէր», չափաւոր կուսակցութիւնների տակտիքի քննութեան:

V

Կ Ա Դ Ե Տ Ն Ե Ր Ը

Պետական դուրմայի ընտրութիւններից քիչ առաջ՝ նրանք իրենց անւանեցին «ժողովրդական ազատութեան» կուսակցութիւն, մի անորոշ ու տարտամ անուն, որ սակայն շատ յարմար էր նախընտրական ազիտացիայի ժամանակ: Գրանից առաջ, նախ քան հոժ և կազմակերպւած կուսակցութիւն դառնալը, նրանք կողմնակից էին Պ. Սարուվէի խմբագրութեամբ հրատարակուող «Օսփօրօժընիէ» (Ազատագրում) ոչ-լեգալ լրագրի: Իսկ դուրմայի մէջ նրանք կազմում էին ընդգիւմադիր կենդրօնը, որ իր հերթին ունէր աջ ու ձախ թեւեր:

Իրենց սօցիալական դրութեամբ,—նրանք, կադեանները, ներկայացնում էին հողատէր և քաղրենի, մասամբ նաև ա Ր տ ա դ ա ս ա կ ա Ր գ ա յ ի ն մասւորականութիւնը, որոնք կարողացան իրենց կողմը գրաւել ժողովրդական ընտրողների այն շերտերը, որոնց զասակարգային գիտակցութիւնը դեռ լիովին չէր որոշւած և որոնք բնագրաբար դեռ փարութ են միապետութեան և անհաստական սեփականութեան սկզբունքներին: Իրենց զբաղմունքով՝ նրանք մեծ մասամբ դաւառական ու քաղաքային գործիչներ են և ներկայացուցիչներ ազատ պրօֆեսսիօնների—փաստաբաններ, ինժեներներ, բժիշկներ, ուսուցիչներ, պրօֆեսօրներ, գիտնականներ, գրողներ,—ազատամիտ աստիճանաւորներ և ընտրիչներ, և թէ միայն կարելի է

ընդունել մի այնպիսի ինքնօրինակ «ղբաղում», ինչպիսին է՝ «րանտիէն»։ Իսկ քաղաքական հայեացքներով՝ նրանք կողմնակիցներ են սահմանափակ միապետութեան, պարլամենտարիզմի, կուլտուրականութեան և խաղաղ ու օրինական պայքարի՝ ինքնակալութեան ու բիւրօկրատիայի դէմ, յանուն Ռուսաստանի արմատական վերանորոգման։

Հակադրելով իրենց՝ ծայրայեղ ձախակողմեան կուսակցութիւնների «րոմանտիզմին» և «ուտօպիզմին» — կադետները միաժամանակ համարում են իրենց «յրէէլ քաղաքականութեան» իսկական ներկայացուցիչներ և կամենում են դրանով ասել, որ նրանք հաշի են առնում ժամանակակից, արդի կեանքի բոլոր իրական կողմերը, ուստի և ձգտում են իրականացնել լոկ այն տեսակ բարենորոգումներ, որ թեւզարում է ինքը կեանքը և որոնք յենարան ու արդարացում են գտնում հասարակական ուժերի բէէլ յարաբերութեան մէջ։ «Չը պէտք է չափից անցնել թէ չէ բանի չենք հասնի» — այդ է նրանց ճառերի ընդհանուր միտքը։ Կարելի է համարձակ ասել, որ կադետներին շարք երուստն են ուսահասարակութեան և ժողովրդի աշխատանքի օրոնք յաշտան ալէս թշնամական գիրք բունելով հին կարգերի դէմ — չը կամեցան կամ չը համարձակեցին յարել ծայրայեղ ձախակողմեան կուսակցութիւններին — սօցիալիզմի օկրատներին և սօցիալիստ-յեղափոխականներին։ Այս բացասական նշանը, սակայն, դեռ որոշ գաղափար չի տալիս սահմանադրական օսմկալարների հասարակական տեսակէտներին, քաղաքական ծրագրի և տակտիքի մասին։ Ուստի հարկաւոր է փորձել՝ աւելի մանրամասն ու ճշգրիտ կերպով բնորոշելու նրանց հասարակական աշխարհայեացքը և քաղաքական գործունէութիւնը։

Նախ և առաջ մենք հրաժարուում ենք մեր բոլոր կադետներին en bloc ազատամիտ համարել, բառի եւրօպական իմաստով։ Եւրօպական ազատամիտը ներկայացուցիչ է դասակարգային, այն էլ՝ բուրժուական, շահերի։ Եւ իբրև այդպիսին՝ նա միշտ հակառակ է եղել և հակառակ կը լինի բոլոր քաղաքական, սօցիալական և մանաւանդ տնտեսական լայն բարենորոգումներին, որոնց նպատակն է բարելաւել աշխատանքի վիճակը, եւրօպական ազատամիտը, չը նայած իր բոլոր շքեղ ու հոյակապ ճառերին, նւիրած «մարդու և քաղաքացու անկապաւելի իրաւունքներին», մէկից աւելի անգամ իր սեփական շահերին զոհ է բերել աշխատանքի դասակարգերի շահերը և դրա համար էլ՝ իրաւամբ արժանացել է խաբէբայ և դաւաճան անւան Ռուսական կադետների մեծագոյն մասը հեռու է ժողովրդի շահերը մատնելուց և դաւաճանելուց։ Սրան գրաւական կարող են լինել նախ՝ սահմանադրական-օսմկալար կուսակցութեան ծրագիրը, երկրորդ՝ նրանց վարմունքը — սակաւ բացառութեամբ, — պետական դուրմայում և վերջապէս՝ այդ կուսակցութեան մի քանի ղեկավարների փայլուն վարկը։ — չը պէտք է մոռանալ, որ այդ կուսակցութեան կորիզը կազմում են շատ յարգելի հասարակական գործիչներ, որոնք բաւական ծառայութիւն են մատուցել ժողովրդին՝ գաւառական փաստաբանութեան շրջանում, ինչպէս նաև փաստաբանութեան, ժողովրդական լուսաւորութեան, գիտութեան և գրականութեան ասպարէզներում։ չը պէտք է մոռանալ նաև, որ կուսակցութեան ղեկավարները խոշոր խելքի, խոշոր գիտելիքների և պահանջկոտ խղճի տէր մարդիկ են։ Այս ամենը յիշատակելով, մենք ամենեկին մտադիր չենք գովերգներ ասել մեր կադետներին, մենք միայն ցանկանում ենք, որքան հնարաւոր է՝



անկողմնակալ լինելը մենք կամենում ենք պարզապէս անաչառ լինել: Որքան էլ կաղեանների հասարակական-փիլիսոփայական աշխարհայեացքը չը դիմանայ խիստ բնագատութեան, որքան էլ նրանց քաղաքական ծրագիրը կիսատ-պոստ լինի, որքան էլ նրանց տակտիքը չափաւորութեան, անհասարակչութեան, տատանման ու երբեմն նոյնիսկ օպպորտունիզմի կնիք կրի, բայց և այնպէս այս ամենը չի խանգարում «տալ հարկս հարկաւորաց» և համարձակ ասելը.— կաղեանները *pour sa part* բոլոր ժողովուրդի ի գէօլոգներ չեն. կաղեանները ժողովուրդը մատնող ու դաւաճանող չեն. նրանք շատ դէպքերում պաշտպան են ժողովրդական շահերի, թէ և երբեմն ճշտօրէն չեն բմբունում և ճիշտ չեն լուսարանում այդ շահերը:

Գիմենը ուրեմն նրանց ծրագրին, որ մշակել են ուսուցողատարար շարժման յիշատակելի օրերին, 1905 թվի հոկտեմբերի 12—18-ին:

Մահամանդրական ուսմկափարները կամ կաղեանները\* նախ և առաջ ուսմկափարներ են. և այս բոլոր նրանց բերանում, հարկաւ, սին հնչիւն չէ, նրանք համոզած պաշտպաններ են լայն, ուսմկափարական վերակազմութեան՝ իրաւական յարաբերութիւնների շրջանում, պետութեան ֆիւնանսական և տնտեսական քաղաքականութեան ոլորտում՝ հողային և բանւորական օրէնսդրութեան, ինչպէս նաև ժո-

\* Կաղեք բառը ծագում է K (կա) եւ D (դէ) տառերից, որ կօնսիսուցիփօնայիս-դէփօրաս (սահմանադրական-ուսմկափար) բառերի առաջին տառերն են: Այդպէս է գործածուում՝ հակիրճ լինելու համար: Նոյն նպատակով սօցիալ-դէփօրասներ կոչուում են էսդէկ (S էս, եւ D դէ), եւ սօցիալիս-րեփօլիցիփօներներ էսէր (S էս եւ R էր):

ղովրդական լուսաւորութեան հարցերում: Նրանք պահանջում են՝ քաղաքացիական հիմնական ազատութիւնների անմիջական և ըստ կարելոյն կատարեալ իրականացումը.— խղճի, խօսքի, մամուլի, ժողովների, միութիւնների, ընկերակցութիւնների և պահանջագրերի (պետիցիա) ազատութիւն. ազգերի՝ ինքնորոշման ազատութիւն. ազատութիւն տեղափոխութեան. անձի, բնակարանի և թղթակցութեան անձեռնմխութիւն, և այս ամենը՝ բոլոր ուսուցողացիների համար, առանց սեռի խտրութեան, անկախ նրանց դասակարգային և ազգային կացութիւնից: «Քաղաքացիների վերոյիշեալ բոլոր իրաւունքները—ասեա՛ծ է կաղեանների ծրագրում—պէտք է մտնեն ուսուցիչական հիմնական օրէնքի մէջ և ապահովին դատարանական պաշտպանութեամբ»: Ռուս պետութեան նոյն հիմնական օրէնքը պէտք է, նրանց կարծիքով, «ապահովէ կայսրութեան մէջ բնակեող բոլոր ազգերի համար՝ բացի քաղաքացիական և քաղաքական իրաւունքների կատարեալ հաստատութիւնը, նաև կուլտուրական ազատ ինքնորոշման իրաւունք, այն է՝ տարբեր բարբառների և լեզուների գործածութեան կատարեալ ազատութիւն հասարակական կեանքում. ազատութիւն՝ հիմնելու և պահպանելու ուսումնական հաստատութիւններ և ամեն կարգի համախմբումներ, միութիւններ և հիմնարկութիւններ, որոնց նպատակն է պահպանել և զարգացնել ամեն մի ժողովրդի լեզուն, զրականութիւնը և կուլտուրան»: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ համաքաղաքացիական և ազգային ազատութեան պաշտպանութիւնը՝ ամեն տեսակ մանուանդ վարչական կամայականութիւններից, յանձնուում է նոր, ուսմկափար հիմունքներով վերակազմած դատարանին:

Միևնոյն ուսմկափարական ոգով են ներշնչւած նաև կաղեանների ծրագրի այն մասերը, ուր խօսքը վերաբե-

րում է պետութեան ֆինանսական քաղաքականութեան, բանւորական օրէնսդրութեան և ժողովրդական լուսաւորութեան: «Մուղղակի հարկաւորութեան ընդհանուր նըւազացումը և անուղղակի հարկերի աստիճանաբար վերացումը՝ ժողովրդական մասաների սպառած սպրանքներից»։ «ուղղակի հարկերի բարեփոխումը՝ եկամտային և ստացւածքային պրօգրեսսիվ հարկատուութեան հիման վրայ, ինչպէս և պրօգրեսսիվ հարկերի ներմուծումը ժառանգութեան համար»։ ապա «գործադուլների իրաւունք», «բանւորական միութիւնների և համախմբուածների ազատութիւն», «օրէնսդրական ճանապարհով ութ ժամայ աշխատանքի ներմուծում», «բանւորական ընտրեալների մասնակցութիւնը՝ աշխատաւորների շահերը պաշտպանող օրէնքների գործադրութեան վերահսկող տեսչութեան մէջ»։ «բանւորների պարտաւորիչ սպահովագրութիւն պետութեան միջոցով՝ հիւանդութեան, դժբախտ պատահարների, ծերութեան և աշխատանքի անընդունակութեան դէմ»։ «հաստատումն քրէական պատասխանատուութեան՝ աշխատանքը պաշտպանող օրէնքները խախտելու համար»։ վերջապէս՝ «վերացումն՝ դպրոց մտնելու համար հաստատուած բոլոր սահմանափակումների, որոնք կապուած են սեռի, ծագման և կրօնի հետ», մասնաւոր և համայնական նախաձեռնութեան ազատութիւն՝ ամեն կարգի դպրոցական հաստատութիւններ բանալու և կազմակերպելու գործում, ինչպէս նաև դպրոցից դուրս տալիք կրթութեան ասպարէզում», «դասաւանդութեան ազատութիւն», «ներմուծումն ընդհանուր, պարտադիր և ձրի տարրական կրթութեան» — ահա կազեաների պահանջները վերոյիշեալ հարցերի սահմանում: Առանց աշտուութեան կարելի է ստել, որ այս բոլոր պահանջները՝ թէ ըստ էութեան և թէ սկզբունքով՝ ոչնչով չեն տարբերուում ուսական ծայրայեղ կուսակցութիւն-

ների համապատասխան պահանջներից, այնպէս որ՝ այդ կողմից՝ կազեաների դէմօկրատիզմը՝ կրկնում ենք, որևէ կասկածի և թիւր մեկնութիւնների տեղիք չի տալիս:

Նոյնիսկ հողային խնդիրը դնելու և վճուելու հարցում կազեաները՝ ռամկավարական տեսակէտից՝ այնպիսի բարձր դիրք բռնեցին, որին դեռ չի հասել ոչ մի աւաջադէմ — ի հարկէ ոչ սօցիալիստական — կուսակցութիւն Եւրոպայում: Յիշեցէք, որ դուժայում կազեաները պընդում էին թէ՛ անհրաժեշտ է ստիպողաբար յետ առնել մասնաւոր հողերը՝ աշխատաւոր գիւղացիութեան շահերը սպահովելու համար: Այդ հողերը, կազեաների կարծիքով, գիւղացիութեան օգտին գրաւած միւս բոլոր պետական, արքայական, կարինետային և վանքապատկան հողերի հետ միասին՝ պէտք է մտնեն «պետական հողային ֆօնդի մէջ», իսկ «այն սկզբունքները, որոնցով այդ հողերը պիտի յանձնելին կարիք ունեցող ազգաբնակիչութեան (համայնական կամ անհատական տիրում կամ շահագործում), պէտք է որոշելին՝ համաձայն հողատիրական և հողից օգտուելու այն առանձնայատկութիւններին, որոնք գոյութիւն ունին Ռուսաստանի գանազան շրջաններում»:

Ճիշտ է, նրանք կողմնակից էին, որ «պետութիւնը վարձատրէ այսօրայ տէրերին արգար և ոչ շուկայի գներով»: Ճիշտ է, նրանք խօսում էին ոչ թէ բոլոր մասնաւոր հողերի, այլ միայն «հարկաւոր չափով» հողերի յետառման մասին. բայց չէ՞ որ մեր կազեաների ռամկավարութեան աստիճանը որոշելու համար կարևոր է այն, որ նրանք հնարաւոր են համարել կողմնակից լինել ստիպողական յետ առման. իսկ այդ չէ՞ որ արդէն մի հարուած է «սեփականութեան սրբազան իրաւունքին», մի տեսակ բացասումն մասնաւոր սեփականութեան սրբազան սկզբունքի՝ յանուն աշխատաւոր դասակարգի շահերի:

Ահա թէ ինչու յետադիմականները կազեաններն անւանեցին «դիմակաւոր սօցիալիստներ», ահա թէ ինչու հայրենիքի բոլոր հաւատարիմ սիւները ունեց բարձրացրին և սկսեցին առատ արցունք թափել՝ պետութեան «անյողդող հիմունքների» երերման առիթով, հէնց որ դումայում հարց դրեց մասնաւոր հողերի սօցիալական յետադիման մասին...

Ռամկավարներ լինելով հանդերձ՝ կազեանները սահմանադրականներ են, նրանց կարծիքով ժամանակակից Ռուսաստանի համար պետական ամենայարմար կազմը՝ սահմանադիր-միապետական կառավարութեան ձևն է: Այստեղ է արտայայտուում, ի միջի այլոց, այն «բէալ քաղաքականութիւնը», որով այնքան պարծենում են նրանք. նրանց հասկացողութեամբ Ռուսաստանի դեռ չը նախապատրաստուած և քաղաքական մտքով անփորձ մասսաները տակաւին չեն հասունացել պետական կեանքի այն ձևերի համար, որոնք կապուած են հանրապետական կազմի հետ: Եւ դրա համար է, որ «ռամկավար հանրապետութեան» պահանջը, որը իբր նշանակ, մակագրուած է սօցիալ-դէմօկրատների և սօցիալիստ-յեղափոխականների ռադիկալիզմի վրայ, առաջ է բերում կազեանների շըրթունքների վրայ մի զիջող մեծամիտ ժպիտ, որով ուզում են ասել՝ դա մի օգային, ուսուպիական, և որ գլխաւորն է, «անքաղաքագիտական» բան է, որովհետև չի համապատասխանում ռուս ժողովրդի ո՛չ հօգեբանութեան, ո՛չ էլ մտաւոր զարգացման:

Արդարադատ լինելու համար, սակայն, պէտք է ասել որ կազեաններն իրենց ծրագրի քաղաքական մասով ևս շատ առաջ են անցել ոչ միայն եւրոպական ազատամիտներից, այլ և եւրոպական հասարակութեան ուրիշ, աւելի արմատական, բայց ոչ սօցիալիստական տարրերից: Ամենից առաջ նշանակալից է այն, որ նրանք ձգտում են

կեանքի մէջ իրականացնել մի ժողովրդական ներկայացուցիչներ, որը հիմնուած է ընդհանուր ընտրողական սկզբունքի վրայ, առանց խտրութեան կրօնի, ազգութեան և միջն չէ իսկ սեռի: Ինչպէս յայտնի է, ընդհանուր ընտրական իրաւունքի սկզբունքը, ուղղակի, հաւասար և գաղտնի քուէարկութեամբ, դեռ չէ իրականացել սահմանադրական բոլոր երկիրներում: Իսկ կանանց ընտրական իրաւունքի մասին լսել անգամ չեն ուզում քաղաքացիական ու քաղաքական հաւասարութեան այնպիսի դասական երկիրներ, ինչպէս Անգլիան և Շվեյցարիան: Բացի դրանից՝ կազեանները պնդում են, որ մինիստրութիւնը պէտք է ընտրել պարլամենտական մեծամասնութիւնից՝ որ նոյնպէս մի տեսակ *pium desiderium* է սահմանադրական քաղաքականութեան մէջ փորձուած այնպիսի երկրի համար, ինչպէս Գերմանիան է: Աւերջապէս կազեանները այնքան բարձր են դնում ժողովրդի ներկայացուցիչական իրաւունքներն ու իրաւասութիւնները, որ գերագոյն իշխանութեան համար շատ բան էլ չէ մնում: Կարգացէք թէկուզ հէնց հեռեւեալ կէտը՝ նրանց ծրագրից. «Ոչ մի որոշում, կարգադրութիւն, ցուցում, հրաման և դրանց նման ակտեր, որոնք չեն հիմնուած ժողովրդական ներկայացուցիչական որոշումների վրայ, ինչ անուան էլ կրեն և ումից էլ բղխեն ներանք, չեն կարող օրէնքի ոյժ ունենալ»: Մի՞թէ այս ամենը չէ վկայում, որ գերագոյն իշխանութեան իրաւունքները *minimum*-ի են հասցրած:

Ինչպէս տեսնում էք, կազեանների ծրագրի մեր ըննած մասը ներշնչուած է ռամկավարական ոգով, որովհետև ձգտում է գրաւել ժողովրդի լայն խաւերը դէպի երկրի կարիքների հոգացողութեան գործը, և այդ ռամկավարութիւնը աւելի որոշ գոյնով երևան է գալիս տեղական ինքնավարութեան հարցում: «Տեղական ինքնավարու-

Թիւնը պէտք է տարածւի ուստական ամբողջ պետութեան մէջ՝—այսպէս է ասում կաղեանների ծրագրի կէտերից մէկը: Իսկ մի ուրիշ կէտ ասում է.—»Տեղական (այսինքն քաղաքային և գաւառական) ինքնավարութեան օրգանների մէջ ներկայացնութիւնը... պէտք է հիմնւած լինի ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի քւէարկութեան վրայ, առանց խտրութեան սեռի, կրօնի և ազգութեան»<sup>6</sup>:

Աւելի կանգ առնել սահմանադիր-նամկարականների ծրագրի վրայ՝ մենք գտնում ենք աւելորդ. հիմնական կէտերը մատնանիշ արեցինք, և այդ արդէն բաւական է նրա էական առաւելութիւններն ու պակասութիւնները բնորոշելու համար: Այդ ծրագիրը ո՛չ միայն արմատական է, այլ և ուսմկարական, այսինքն ներշնչւած է հոգատարութեամբ Ռուսաստանի ամբողջ ազգաբնակչութեան էական շահերի մասին՝ ընդհանրապէս, աշխատաւոր խւերի մասին՝ մասնաւորապէս: Ազգեանների ծրագիրը շատ է տարբերում եւրոպական այն ազատամիտ և յառաջագէտ (ոչ սօցիալիստական) կուսակցութիւնների ծրագրից, որոնք ասպարէզ իջան յեղափոխութեան ժամանակ, և՛ նրանով, որ այդ ծրագրում զուտ քաղաքական բնոյթ ունեցող հարցերի կողքին խոշոր տեղ են գրաւում նաև հասարակական-անտեսական հարցերը:

2ր նայած դրան, ծայրայեղ կուսակցութիւնները այդ ծրագիրը պէտք է համարեն անբաւարար և շատ կողմից թոյլ: Մենք չենք էլ խօսում այնպիսի մանրամասնութեան մասին, ինչպէս օրինակ այն, որ կաղեանների ծրագրում չը կան ճիշտ ու միանգամայն վճռական ցուց-

<sup>6</sup> Վերս բերած բոլոր փաղաճներն վերցրած են Վ. Խվանովիչի գրքից՝ «Ռուսական կուսակցութիւնները, միութիւնները եւ լիգաները» 1906, Պետերբուրգ:

մունքներ, թէ անհրաժեշտ է Ռուսաստանի առանձին ազգութիւններին կատարեալ իրաւունք տալ ո՛չ միայն կուսուորական, այլ նաև քաղաքական ինքնորոշման՝ եթէ այդ ցանկալի երևայ ազգութիւններից որևէ մէկին: Այստեղ ինչդիրը մանրամասների մէջը չէ, այլ ծրագրի ընդհանուր ոգու: Իսկ նրա ընդհանուր ոգին արտայայտում է մի տեսակ կիսատուտութիւն, որ արդիւնք է մտքի ինչ որ երկչոտութեան, բայց առ քայլ մինչև վերջնական եզրակացութիւնները հասնելու «երկիւղի Մարդիկ մինչև հասարակ զարգարանքի են հասցնում գերագոյն իշխանութեան իրաւունքները, և դրա հետ միասին, վախենում են արտասանել հանրապետութիւն բառը, ինչպէս նրանց աւելի ևս չափաւոր նախորդները քաշուած էին «սահմանադրութիւն» բառն արտասանելուց: Գոնէ մաքի անվասութիւն սովորէին թէկուզ հէնց այն Գերցէնից, որին այնքա՛ն սիրում են իրենց ուսուցիչը համարել և որը համարձակօրէն ասում է. «Համաձայնեցէք մի անգամ ընդմիշտ, որ հանրապետութիւնը ազգերի ազատութեան անխուսափելի սկիզբն է. այդ առաջին քայլն է, առանց որի անհնարին է եկրորդը»: Իսկ երկրորդ քայլը «սօցիալիզմն» է: Սօցիալիզմը, ասում է նոյն Գերցէնը, ենթադրում է հանրապետութիւն, իբրև անհրաժեշտ անցած ճանապարհ, և հանրապետութիւնը հէնց այդ փոխանցն է միապետութիւնից դէպի սօցիալիզմ»: Բայց բանն էլ հէնց այն է, որ մեր կաղեանները նոյնքան քաշուած են խօսել սօցիալիզմի մասին, որքան և հանրապետութեան:—»Մենք ինքներս սօցիալիստներ ենք, պնդում են նրանցից մի քանիսը, բայց սօցիալիզմի մասին խօսելը՝ Ռուսաստանի համար դեռ ևս անժամանակ է»: «Մինչև ճիւղը կը թրջի՝ հիւանդի հոգին կը թռչի»: «Գա նի սի ա բան է, իսկ մենք նազդի ետեից ենք

ընկած:—Սօցիալիզմը դեռ ևս չը վճռուած պրօբլեմ է, խորիմաստ կերպով ասու՞մ են ուրիշ կադեմներ:—Սօցիալիզմը անիրականալի ցնորք է, սիրուն ուսուպիա, ասու՞մ են ուրիշները: Եւ այդ բոլոր պնդումների մէջ, ամենալաւ դէպքում, մարդ դարձեալ գգում է մտալախուժիւն, վախ՝ սեփական պահանջները մինչև նրանց տրամաբանական վերջակէտը հասցնելու, իսկ ամենալատ դէպքում... դա մի վախ է՝ իրենց դասակարգային առանձնաշնորհումների և շահերի համար, վախ՝ կազմակերպուած մասսաների ահարկու ոյժի առջև, մասսաներ, որոնք զարթնում են՝ ազատօրէն ստեղծագործելու նոր, անսովոր, մինչև այժմ չը փորձած կեանքի ձևեր:

Ազդեաները համարձակեցան պահանջել՝ մասնաւոր հօդերի ստիպողական յետ առնելը, աշխատաւոր գիւղացիութեան անյետաձգելի կարիքները գոհացնելու համար: Քայց անողոր ու խիստ հեաւոդականութեամբ իրենց պահանջները մղել հեռուն, մինչև ամբողջ հօդի ազգայնացումը, կամ աւելի հեռուն՝ մինչև նրա համայնացումը—նրանք անգոր են. ինչ որ բան է պակասում նրանց մտքերին ու ոգուն...

Ազդեաները համարձակեցան խօսել ուժժամեայ բանւորական օրւայ մասին, աշխատանքի պաշտպանութեան մասին, ընդդէմ անսիրտ շահագործման, քրէական պատասխանատուութեան մասին՝ աշխատանքը հովանաւորող օրէնքների խախտման դէպքում, —բայց անել դարձեալ մի վճառական քայլ, մի քայլ, որ արդարացնում է և՛ կեանքը, և՛ գիտութիւնը, և՛ տրամաբանութիւնը, դարձեալ մի քայլ, նոյնիսկ իրեն սեփական մտածողութեան շաւղով, միանգամ ընդ միշտ անցնել աշխատաւորների կողմը, հասկանալ որ դրամատիրական անտեսութեան շրջանակի մէջ անհնարին է բանւոր զասի կատարեալ ազատագրումը, ներշնչել սօցիալիզմի գաղափարներով և ներբեւ նրա

սպասաւորութեան—ո՛չ, այս վեր է նրանց ոյժերից, սրա համար նրանց պակասում է և՛ մտքի, և՛ գործի համարձակութիւն:

Այո՞... „գործի համարձակութիւն“. կադեմների շարքերը շատ են աղքատ յեղափոխական խառնեաձքի տէր մարդկանցով, և դա ուժեղ հետք է թողնում ոչ միայն նրանց ծրագրի, այլ և ամենից առաջ նրանց տակտիքի վրայ:

### VI

#### Տ Ա Կ Տ Ի Բ Ի Մ Ա Ս Ի Ն

Իւրաքանչիւր քաղաքական կուսակցութեան տակտիքը պէտք է սերտ կերպով և օրգանապէս կապուած լինի իր ծրագրի հետ. իսկ քաղաքական ծրագրներն, իրենց կողմից, տրամաբանօրէն բղխում են այս կամ այն կուսակցութեան հասարակափիլիսոփայական աշխարհայեացքից: Հետեալպէս՝ քաղաքական կուսակցութիւնների հասարակափիլիսոփայական աշխարհայեացքի արգասիքներն են, որոնք ամբողջովին որոշում են տակտիքը:

Սակայն սրանից կարելի է հետեցնել, որ ուրեմն տակտիքն ևս մի քարացած ու խիստ դօգմատիկ բան է, որը հաշի չի առնում կենդանի իրականութեան փոփոխական ու ընթացիկ երեւոյթների բաղմաձեւութիւնն ու բարդութիւնը: Ամենեւին ոչ:

Տակտիքը այն միջոցների համագումարն է, որոնց օգնութեամբ քաղաքական կուսակցութիւնները յոյս ունեն կեանքի մէջ մտցնել իրենց ծրագրերը, լիովին կամ մասմաս: Եթէ ծրագրերը կենսական է, եթէ նա հաշի է առնում այն բոլոր էական մօմենտները, որոնք որոշում են ընթացիկ երեւոյթների ընթացքը, այդ դէպքում, այդ ծրագրին համապատասխան

տակտիքն ևս կրում է կենսական ճշմարտութեան կնիք: Բայց ծրագրի կենսունակութիւնը կախած է այն հասարակա-փիլիսոփայական աշխարհայեացքի կենսունակութիւնից, որ իւրացրել են այս կամ այն քաղաքական կուսակցութեան ներկայացուցիչները: Հետեւաբար՝ տակտիքի նպատակայարմարութիւնը պայմանաւորւում է այն հասարակա-փիլիսոփայական աշխարհայեացքի գիտական հետեւողականութեամբ, որ այս կամ այն քաղաքական կուսակցութեան գործունէութեան հիմքն է կազմում:

Մոլորաբար յեղափոխականներին կշտամբում են՝ ասելով թէ նրանք «րէալ քաղաքագէտներ» չեն, և «րէալ քաղաքականութիւն» ասելով հասկանում են որոշ վայրկեանի իրական պահանջներն ըմբռնելու, հասարակական ոյժերի իրական յարաբերութիւնը կշտադատելու ընդունակութիւնը, ինչպէս նաև իսկապէս իրական աշխարհը և ոչ եթերային ինդիւիդուալներ ղենելու և լուծելու ձգտումը:

Ենք պնդում ենք, որ այդ տեսակ կշտամբանքները՝ յեղափոխական կուսակցութիւնների հասցէին՝ չեն դիմանում ոչ մի քննադատութեան. այդ կշտամբանքները արդիւնք են կամ թերամտութեան կամ, որ աւելի վատ է՝ միտումաւոր շարախօսութեան: Եթէ «րէալ քաղաքականութիւն» ասելով պէտք է հասկանալ գործունէութեան այնպիսի մի եղանակ, որ խիստ համապատասխան է ճիշտ գնահատւած և լրջօրէն հաշուի առած պատմական երևոյթների ընթացքին, ապա մեր յեղափոխականները, չնչին բացառութեամբ, պէտք է համարին իսկական «րէալ քաղաքագէտներ»: Նրանք չեն սաւառնում եթերային, վերին ոլորաներում և նրանց առաջնորդող իրենց տակտիքում առաջադրանքները չեն նրանք միշտ կանգնած են այն պահանջների հողի վրայ,

որոնց թերագործներն են լայն մասսաների տառապանքը, գայրոյթը, բարկութիւնն ու լուսաւորւած գիտակցութիւնը: Նրանց «քաղաքականութիւնը» օգում չէ կախւած, այլ արմատ գցած կենդանի իրականութեան մէջ՝ սնւում է նրանից. նրանք չեն սոսկում հասկանալու այդ իրականութիւնն այնպէս, ինչպէս պահանջում է ճշմարտի գգացումը, առանց կեղծիքի, սակարկութեան և տատանման:

Իսկ եթէ «րէալ քաղաքականութիւն» համարենք երբեք, երկչոտ և մի աջ մի ձախ զարձոյց օպպօրտիւնիզմը—այդ դէպքում, այո՛, յեղափոխականները «րէալ քաղաքագէտներ» չեն, որովհետև նրանք սրտանց ատում են օպպօրտիւնիստներին և համարում են նրանց ամենանյութաւի և, որ աւելի վատ է՝ ամենախղճուկ տարրը քաղաքական կուսում, մանաւանդ՝ երբ կռիւն ստանում է այնպիսի լայն թափ, որպիսին նա ունի այս րոպէին Ռուսաստանում:

Վերագրեալը ուղղակի մեզ բերում է հասցնում է կազեաների տակտիքին:

Կազեաների տակտիքը... Չը կայ մի աւելի դժւարին և միաժամանակ աւելի դիւրին բան, քան որոշել թէ որն է նրանց տակտիքը. կազեաների տակտիքը՝ ամենից առաջ որևէ որոշ և դիմացկուն տակտիքի բացակայութիւնն է: Գա մի շատ նրբագգաց բարօմետր է, որի բարձրութիւնը ամբողջապէս որոշում է յեղափոխական մթնոլորտի ճնշումով: Գա ոչ նուազ նրբագգաց մի հողմացոյց է, որի սլաքը լիովին գտնւում է ըէակցիօներ և յեղափոխական հողմերի իշխանութեան տակ:

Երբ ազնիւ դիմադրականները (օպպօզիտիօն)—ասում ենք ազնիւ, որովհետև մենք ունենք նաև անպայման անպանիւ դիմադրականներ—ամուր նստել են ըէակցիայի և

յեղափոխութեան արանքում և գրանով իսկ ընդմիշտ իւրացրել օպպօզիտիւնիզմի տակտիքը:

Ահա՛, յեղափոխութեան ալիքները ուռչեցին և լեռնացան: Ամենքն էլ յափշտակած ու թոված, ահ ու դողով ինչ որ հրաշք սպասելով՝ զմայլանքով նայում են նրանց: Միայն ըէակցիան է, որ չարամտօրէն ատամ է կրճտացնում ու Ֆլշում օձի պէս և, զգալով որ հիմայ ոչ որ նրա գլուխը չունի՝ անցնում է գետնի տակ: Իսկ օպպօզիցիան ս ու ւ ս ու փ ու ւ ս ծափ է տալիս՝ խընդումներես, բայց և սառսուռով: Ընդում է, որովհետև ըէակցիայի բանը բուրդ եղաւ, և սարսուռով, որովհետև սեփական ապագայի ահը բռնում է նրան...

Բայց ահա յեղափոխական ալիքն ընկրկեց, փշուրելով «հին կարգը» պահպանող սեփնների հակայական քանակի հանդէպ: Բարօմետրային ճնշումը պակասեց: Կենսական ծովի ալեծովի մակերեսին միայն թեթև վէտվէտումներ են նկատուում: Հողմը փչեց յետադիմութեան ստուն ափերից: Ինքը ըէակցիան վեր քաշեց գլուխը, և ահա օրէցօր աւելի և աւելի գօրեղ է հնչում չարութիւնից խեղդուող նրա ձայնը: Ի՞նչ բանի է օպպօզիցիան: Նա այլևս ծափ չի տալիս, նոյնիսկ ս ու ւ ս ու փ ու ւ ս... Նա յուսակտուր՝ կորցրել է գլուխը: Թոշնեց վարդերանդ կարմիրը, որ խինդ ու ծափի օրերին սկսել էր վառվռիլ նրա անարիւն այտերին: Նրա շանթարձակ ծառերի ծպտուներ չը կայ, կիսաձայն՝ ինչ որ խղճուկ բառեր է թոթովում նա «ուսօպիսանների» և «ըէալ քաղաքագէտների» մասին, գերապօրինութեան դէմ «օրինական միջոցներով» կռիւ մղելու անհրաժեշտութեան մասին. նա նոյնիսկ հրաժարուում է այն կրակորական դիմադրութիւնից, ուղղած կամայականութեան ու բռնութեան ոճմակին, որ ինքն էր հրամանագրում Ալիբօրգի համագումարում: Մի՞թէ տխրալի չէ այս, մի՞թէ վիրաւորական չէ... ազնիւ օպ-

պօզիցիայի կողմնակիցների համար: Աւելի քան տխրալի, աւելի քան վիրաւորական...

Բայց ի՞նչն է պատճառը այս երերուն և հողմաւար տակտիքի:

Սրա բացատրութիւնը նախ այն է, որ նրանք բռննցանկութիւն ունեն հաշտեցնելու անհաշտելին և ընթանալու երկու միմեանց ժխտող ոյժերի հաւասարագորով՝ բռնելու միջին ընթացք այնտեղ, ուր պատմական հանգամանքների բերումով՝ կամ հոսանքի հետ պիտի գնալ կամ հոսանքի հակառակ: Պարզ է, որ այս վիճակում՝ մարդ որքան էլ կուչ ու հուպ գայ, ոտները գետնին թակելուց հետո չի գնայ: Կիսատ-պռատ, մտափախութեան կնիք ունեցող աշխարհայեացքը\* բերում հասցնում է կիսատ-պռատ ու անորոշ քաղաքական ծրագրի. իսկ խառնածին ծրագիրն անհրաժեշտօրէն բաշում է իր յետեւից համապատասխան տակտիքի, այսինքն՝ զիջումների, աջ ու ձախ ընկնելու, խուսափումների և ջուր ծեծելու տակտիքը: *C'est la fatalité*...

Եւ որքա՞ն հաճելի է, այս ծօծող աչք ու ականջ յոգնեցնող տակտիքից յետոյ, հանգիստ առնել մեր յեղափոխական կուսակցութիւնների տակտիքական գործակերպերի վրայ, թէկուզ հէնց սօցիալ-դէմօկրատներ ի տակտիքը—որտեղ եթէ ոչ ամեն ինչ, գոնէ շատ բան պարզ է ու որոշ:

Սօցիալ-դէմօկրատները պնդում են, որ անհրաժեշտ է ամենանուսնդուն սօցիալիստական պրօպագանդանել բանւորական—իսկ վերջերս նաև գիւղացիական—լայն մասսաներում: Այս տակտիքական գործակերպը սերտ կապած է նրանց վերջնական նպատակի հետ—այն է՝ նախապատրաստել այդ մասսաները սօցիալական յե-

\*) Տես Գալտրոյ գլուխ:

ղաշըման համար, յանուն «աշխատանքի և արդարութեան թագաւորութեան» իրականացման, այսինքն սօցիալիզմի:

Բացի դրանից, սօց-դէմօկրատները պնդում են նաև, որ անհրաժեշտ է ամենաեռանդուն ա գիտացիա անել դարձեալ նոյն քաղաքային պրօլետարիատի և գիւղացիութեան լայն խաւերում, նպատակ ունենալով կազմակերպել այդ մասաները՝ «կործանելու ցարի միապետութիւնը և նրա տեղ սամկափար հանրապետութիւն հաստատելու» համար: Տակտիքական այս գործակերպն ևս անմիջօրէն բղխում է նրանց վերջնական նպատակից. քաղաքական և քաղաքացիական ազատութեան բացակայութիւնը Ռուսաստանում խոչընդօտ է հանդիսանում, նրանց կարծիքով, տնտեսական զարգացման և դրանով իսկ խանգարում է պրօլետարիատի դասակարգային կուրի զարգացմանը ու նպաստում է «պետութեան և ունեւոր դասակարգերի ձեռքով բազմամիլիօն գիւղացիութեան շահագործումի ամենաբարբարոս ձևերի պահպանման և գօրեղացման»\*: իսկ այդ ամենը միասին վերցրած, անկասկած, բռնում է սօցիալիստական շարժման անիւր և դանդաղեցնում «աշխատանքի և արդարութեան թագաւորութեան» իրականացումը:

Սօցիալ-դէմօկրատները, վերջապէս, ամեն կերպ աշխատում են պաշտպանել և նպատակայարմար հունով առաջ վարել քաղաքային պրօլետարիատի տնտեսական ու քաղաքական կուրը: Այդ նպատակով՝ նրանք ձգտում են կրթել նրա մէջ լուրջ վերաբերմունք դէպի գործադուլը, քաղաքական և տնտեսական, ինչպէս և դէպի ցոյցերը: Նրանք ձգտում են կազմակերպել պրօլետարիատից մարտական շարքեր, հօժ և լաւ զինւած

\* Տես «Ռուս. Ս. Դ. Բ. Կուսակց.» ծրագիրը:

թշնամու դէմ՝ «ընդհանուր յարձակում» անելու համար: Եւ տակտիքային այդ գործակերպը, կասկած չը կայ, սերտ կապ ունի նրանց ժօտաւոր և վերջնական նպատակի հետ: Աստօհ չը լինելով, որ կառավարութեան և աշխատաւոր դասակարգերի միջև սկսած պայքարը կարող է խաղաղ վախճան ունենալ, նրանք պատրաստում են պրօլետարիատը «զինւած ապստամբութեան» համար, որպէսզի ոյժով ձեռք բերեն այնպիսի պայմաններ, որոնց մէջ դէպի սօցիալիզմն ընթացող շարժումը նւազագոյն արգելքների կը հանդիպի: »

Սօսիալիստ-յեղափոխականների տակտիքը, որ նոյնքան հոյակազմ է և հետևողական, միաժամանակ կրում է աւելի ազգմիկ և յեղափոխական ոգի: Սօցիալիստ-յեղափոխականների կուսակցութիւնը, երևան գալու օրերից արդէն, միշտ կողմնակից է եղել այնպիսի տակտիքի, որը տեղ է տալիս յեղափոխական եռանդի բոլոր տեսակներին, բոլոր ոյժերին, հակումներին և ընդունակութիւններին, ներդաշնակօրէն միաձուլելով կուրի բոլոր ձևերն ու մեթօդները՝ մինչև ամենաահարկուններն ու վճռականները, և այդ ամենը դարձնելով մի վճռական ու բազմակողմանի գրոհ կառավարութեան դէմ\*: Սօցիալիստ-յեղափոխականները, ընդունելով կուրի այն բոլոր մեթօդները, որ գործադրում են սօցիալ-դէմօկրատները՝ միաժամանակ միշտ մտածել են «կառավարական ճնշումներին հակահարւած տալու, անմիջապէս կուրի, զինւած կուրի և ոյդ կուրի տարբեր ձևերի մասին» (ibid): Եւ ասօհ «կուրի հնարաւոր ձևերի» շարքում՝ նրանք միշտ գործադրել են և շարունակում են գործադրել տէրրօրը:

\* «Տակտիքի և ծրագրի հարցեր» — ժողովածու «Յեղափոխական Ռուսաստանի» յօդուածներից:



Գեռ ևս իրենց գործունէութեան սկզբում, սօցիալիստ-յեղափոխականները՝ իրենց ամենայայանի ղեկավարներին մէկի բերանով ասում էին. «Տէրրօրական կուբի բնոյթն իսկ, որ նախ և առաջ կապւած է արիւն թափելու հետ՝ այնպէս է, որ մենք ամենքս ուրախութեամբ կընդգրկենք ամեն մի պատճառաբանութիւն, որը կարող է մեզ ազատել կենդանարար խօսքի զէնքը կուիւնների մահաբեր զէնքով փոխարինելու անիծեալ անհրաժեշտութիւնից: Բայց մենք ամեն ժամանակ ազատ չենք միջոցներ ընտրելիս»: Ու յետոյ. «Ստրկութեան ու լուծեան աշխարհում, այն աշխարհում, ուր միլիօնաւոր մարդիկ դատապարտւած են կիսաբաց և անասնական գոյութեան և ենթակայ են հոգեկան տգիտութեան, բիրտ անապաշտութեան և բարոյական մահուան սարսափին. այնտեղ ուր կառավարող խումբը իրօք լողում է իր դժբախտ գոհերի արեան և արցունքի մէջ, և դժնեայ խստութեամբ ու լպիրջ ծաղրանքով է պատասխանում դիմադրութեան ամենաթոյլ արտայայտումներին,—այդպիսի մի երկրում, մեր բարոյականութեան համաձայն, մենք ոչ միայն իրաւունք ունենք, այլ և սուբիւն, մենք բարոյապէս պարտաւոր ենք՝ կշռի մի թաթում գնել մարդկային տառապանքի այդ ծովը, իսկ միւս թաթին՝ դրա պատուհանն եղողների հանգիստը, ապահովութիւնն ու նոյնիսկ կեանքը» (ibid):

Եւ այս խորապէս ողբերգական, ներքին բարոյական դատաստանն արտասանեց իր վճռական, անբառնալի «այո»-ն յօգուտ տէրրօրի, և սօցիալիստ-յեղափոխականներն իրենց սակափքի մէջ մտցրին նաև տէրրօրը:

Բայց այս գեռ բաւական չէ: Զգացումների տրամաբանութիւնից զատ՝ այդտեղ մեծ դեր է խաղացել և մտքի տրամաբանութիւնը: Տէրրօրը կուբի զէնք ընդունեցին ոչ միայն բարոյական, այլ և բացիօնալ կշռագատումներով: Տէրրօրը, ասում են սօցիալիստ-յեղափոխա-

կանները, «անհրաժեշտ ինքնապաշտպանութեան զէնքերից՝ մէկն է», նա ագիտացիայի մի հզօր միջոց է. նա «իր վրայ է գամում ընդհանուրի ուշադրութիւնը, բնասթափ է անուամբ ամենքին, զարթեցնում է ամենաթմրած և ամենամտաբեր մարդկանց... սախում է նրանց քաղաքականապէս մտածել նոյն իսկ իրենց կամքի հակառակ»... Ի հարկէ յեղափոխական կուբն տէրրօրական գործողութիւնների վերածելն բացիօնալ չէ, նոյնիսկ անիմաստ բան է, որովհետև տէրրօրը— «կուբի տեխնիկան գործակերպելից մէկն է լոկ, և միւս գործաձեւերի հետ կապակցելով է միայն, որ նա կարող է երևան հանել այն բոլոր ազդեցութիւնը, որի վրայ յոյս են դնում սօցիալիստ-յեղափոխականները»: Նրանք միշտ հակառակ են եղել և միշտ էլ հակառակ կը լինեն միակողմանի և բացառիկ տէրրօրիզմին, որովհետև նրանք ցանկանում են «ոչ թէ փոխարինել այլ զօրեղացնել ու լրացնել միայն մասսայական կուբը՝ ռազմիկ առաջապահների յանդուգն հարւածներով, որոնք թշնամի բանակի սրտին են ուղղւած» (ibid):

Աննպատակ չէր, որ մենք երկար կանգ առանք սօցիալիստ-յեղափոխականների պատճառաբանութեան վրայ յօգուտ տէրրօրի: Սօցիալիստ-յեղափոխականների ամբողջ տակափքը ներդաշնակօրէն կապւած է նրանց ծրագրի՝ հետևապէս և նրանց հասարակա-փիլիսոփայական աշխարհայեացքի հետ.— նրանք տէրրօրիստներ են ոչ թէ իրենց տեմպերամենտով, ոչ թէ որովհետև համարձակութիւնն ու յանդգնութիւնը բացառապէս միայն նրանց է յատուկ, այլ իրենց հասարակա-փիլիսոփայական աշխարհայեացքի մի բանի խիստ կարևոր կէտերի պատճառով: Միևնոյն դրողումներով է որ սօցիալ-դեմօկրատները սկըզբունքով հակառակօրդ են կուբի տէրրօրական գործակերպելին: Պատմական պրօպէսի միակ ներգործօն տարրը, սօցիալ-

դէմօկրատների կարծիքով, հանդիսանում են մասսաները: Նրանք համարեա ոչ մի նշանակութիւն չեն տալիս առանձին անձերին, «հերոսներին», այս բառի ուղղակի կամ փոխաբերական առումով: Կարևորն այն չէ, ասում են նրանք, որ մէջազեղից վերացնենք Վիրակոսին կամ Մարկոսին, որոնք պատմական հանգամանքների քմայքով՝ այսօր ձեռք են առել կառավարութեան ղեկը և զրանով իսկ հնարաւորութիւն են ստացել ճնշելու և բռնանալու ստրկացրած մասսաների վրայ. կարևորը՝ այն բոլոր պայմանների ոչնչացնելն է, որոնք կեանքի բեմն են դուրս բերել այդ Վիրակոսներին ու Մարկոսներին:


Մօցիալիստ-յեղափոխականները այլ կերպ են մտածում: Նրանք պնդում են, որ պատմութիւնը ստեղծում են ոչ միայն մասսաները, այլ և «լիակատար իշխանութիւն» ունեցող Վիրակոսներն ու Մարկոսները: Ուստի, նրանց կարծիքով, ոչ միայն պէտք է ոչնչացնել այն պատմական պայմանները, որոնք հասարակական պիրամիդի գագաթն են բարձրացրել բռնաւորներին, այլ և պէտք է ոչնչացնել նոյնպէս և Վիրակոսներին ու Մարկոսներին, որոնք պաշտպանում են այդ պայմանները:

Այսպիսով, ինչպէս տեսնում էք, դէպի անձի պատմական զերն ունեցած տարրեր վերաբերումը մեզ տանում հասցնում է տէրրօրի տրամագծօրէն հակադիր գնահատութեան, իբրև յեղափոխական կուռի մի անկախ ձևի..

Մենք ընդգծեցինք այն բոլորը, ինչ որ ամենից կարևորըն էր Ռուսաստանի երեք ամենաուժեղ քաղաքական կուսակցութիւնների տակալքի մէջ: Մենք մասնանիչ արինք նաև այն ամենը, ինչ որ բնորոշ է նրանց ծրագիրներում: Եւ զրանով էլ վերջացնում ենք:

ՄԱՐՏՈՑԻ  
ՄԱՐՏՆԱԳԵՐՈՒՄ

«Ազգային գրադարան»  
NL0124060



Հ Ա Յ Յ Ե Ղ . Գ Ա Շ Ն Ա Կ Յ Ո Ւ Թ Ե Ա Ն  
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՒԻՆՆԵՐԸ

	Տր. ս.
1. Ապրտավրական ոգի (սպարտաւ)	.10
2. Յեղախոխական կեռնէլց (սպարտ)	.05
3. Գազցնի սպարտան (սպարտ)	.05
4. Գիստական սոցիալիզմ. Յ. ԷՆԳԵԼՍ (սպարտ.)	.40
5. Հայ Յեղ. Գառնիկոսյանի ծրագիր. (Բ. սպարտ.)	—
6. Կովկասեան խմբի արժանանք. (սպարտ.)	.20
7. Կարևոյ յիշատակին (Չարս հայտաւած)	.50
8. Հ. Յ. Գ. Երբոյ ընդ. Ճոզովի ասեանագրութիւնը	—
9. Գեղիչներ, Homo homini lupus, Վ.Ա.ԲԻԷԼՍ (սպարտ.)	.20
10. Երեսասարդներին. Պ. ԿՐԱՊՕՏՆԻՆ (սպարտ.)	.20
11. Ազատութեան հանապարհին. Վ.Ա.ԲԻԷ. Ա. (սպարտ.)	.30
12. " " " " " " " "	.60
13. Ամբոխացի սրտաթոնոքիւն. Է.Լ.ԷՆԵ. (սպարտ.)	.50
14. Ազատութեան հանապարհին. Վ.Ա.ԲԻԷ. Գ.	.30
15. Հայաստան և Մակեդոնիա	.50
16. Կովկասեան վեհեր. Է. ԱԿՆՈՒՆԵ. (սպարտաւ)	3.—
17. Հայերնիի գաղափարք. Մ. Վ.Ա.ՐԱՆԳԵԱՆ (սպարտ.)	1.—
18. Կարմիրեզական կանոններ. (Բ. սպարտ.)	—
19. Գեղի կախ. Է. ԱԿՆՈՒՆԵ. (Կովկաս՝ 1 բարդի, Ամերիկա՝ 1/2 բարդ.)	2.—
20. Յեղախոխականներ. Ա. ՆԵՐՍԻՍԻԱՆԵԱՆ (սպարտ.)	.20
21. Կովկասեան Կովկասեան գործունէութեան. (Բ. սպ.)	—
22. Подвиги царизма. В. Арапатекин.	.50
23. Les tueries de Bakou. A. ARAZI	.20
24. Յեղախոխական զանգ.	.20
25. Հ. Յ. Գ. Երբոյ ընդ. Ճոզովի ասեանագրութիւնը.	—
26. Կոչ Մահմադականներին (բուրժուէզ)	.10
27. Les Plaies du Caucase, E. AKNOUNI	2.—
28. Ազատութեան հանապարհին. Վ.Ա.ԲԻԷ. Գ. գրեղի.	.40
29. Մեծ մարտազանգի դեմ (Կասախարստիւն)	.50
30. Վիսոժի բազէն. Վ.Ա.ՐԱՆԳԵ.	.50
31. Յեղախոխականի մեղք. ԲՐ. ՄԵՐՅՅԷԼԵԱՆ	1.—
32. Հայրդիներ. Մ.Ա.ՄԱՆԹՕ.	.50
33. Մասուն-Մուժի կախներ	.50
34. Հայկական սանջաններ և Օւրադան. ՅԵՐԵՆԻԱՆ	.50
35. Մարտական երեսնագներ. ԱՆԿՐԱՆԻԿ.	1.—
36. Միացէ՛՛՛, կոչ Թիւրքիայի բոլոր ազգերին (բուրժուէզ)	.10
37. Թիւրքական բաներք. ՄԱՐ.	.25
38. Կաղանկական կուսակցութիւնները Ռուսաստան ւ՛մ	.50